# Մասիս Շաբաթաթերթ

34ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 34 (1684) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 20, 2014
VOLUME 34, NO. 34 (1684) SATURDAY, SEPTEMBER 20, 2014

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ Ընկ. Եղիկ Ճէրէճեանի «Յաւերժի Ճամբու Կերտիչներէն» Գրքի Շնորհանդէսը



Հանդիսութեան ընթացքին՝ Տիկ. Հրանոյշ Յակոբեան, Ընկ. Յակոբ Տիգրանեան եւ գրքի հեղինակ Ընկ. Եղիկ Ճէրէճեան

Սեպտեմբեր 17-ին ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ լիբանանահայ հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան Եղիկ Ճէրէճեանի՝ Պէյրութի մէջ լոյս տեսած «Յաւերժի Ճամբու Կերտիչներէն» գրքի շնորհանդէսը, որ հեղինակի 6-րդ գիրքն է:

Հանդիսութեան ներկայ էր ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան, գրքի հեղինակ, Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկ. Եղիկ Ճէրէճեան եւ Հայաստան-Սփիւռք համաժողովին մասնակցելու նպատակով տարբեր երկիրներէն Երեւան ժամանած Հնչակեան ներկայացուցիչներ:

Միջոցառման սկիզբը ողջոյնի խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան: Ան նշեց, որ այս գրքի շնորհանդէսը իւրօրինակ խորհուրդ ունի, քանի որ Եղիկ Ճէրէճեանը տուն է բերած է ազգային ազատագրական շարժման մեր հերոսները:

«Մեր հերոսների մասին մենք քիչ տեղեկութիւններ ունենք: Պարոն Ճէրէճեանը մաքրել է դարի փոշին եւ այնտեղից բարցրացրել մեր ազնուագոյն տղաներին: Մարդիկ, որոնք իրենց կեանքը 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին նուիրեցին հայկական ազատագրական շարժմանը, ապրեցին մի ժամանակահատուած, որը ամե-

Շար.ը էջ 4

## Ըմբշամարտի Աշխարհի Ախոյեանութեան Հայաստան Նուաճեց Երկու Ոսկի Մետալ

Ուզպէքիստանի մայրաքաղաք Թաշկէնդի մէջ աւարտած Յունահռոմէական ոճի ըմբշամարտի աշխարհի ախոյեանութեան ընթացքին Հայաստանի ներկայացուցիչները հասան փայլուն յաղթանակներու, նուաճելով երկու ոսկի մետալ:

Առաջին անգամ ըլլալով աշխարհի ախոյեան դարձան 75 քիլոկրամ ծանրութեան մէջ Արսէն Ջուլֆալակեան եւ 98 քիլոկրամ ծանրութեան մէջ Արթուր Ալեքսանեան:

Յունահռոմէական ոճի ըմբշամարտի աշխարհի այս ախոյեանութեան Հայաստանը միակ երկիրն էր որ, նուաճեց 2 ոսկիէ մետալ: Ռուսաստան, Սերպիա, Իրան, Հունգարիա, Գուպա եւ Ֆրանսիա, իւրաքանչիւրը բաւարարուեցան մէկական տիտղոսով:

Ժամանելով Երեւան, Հայ ըմբիշները «Զուարթնոց» օդանաւակայանին մէջ բազմաթիւ երկրպագուներու կողմէ արժանացան խանդավառ ընդունելութեան:

## Սէյրան Օհանեան. «Թուրք-Ատրպէյճանական Զինավարժութիւնները Հայաստանին Չեն Սպառնում»



ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան

Թուրք-Ատրպէյճանական զինավարժութիւնները ոչ մէկ կերպ չեն սպառնար Հայաստանին: Այս մասին Սեպտեմբերի 16-ին, լրագրողներուն յայտարարեց ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան՝ անդրադառնալով այս օրերուն կատարուող թուրք-ատրպէյճանական ռազմական զինավարժութիւններուն:

Սէյրան Օհանեանի համաձայն, Թուրքիան եւ Ատրպէյճանը ռազմավարական միջոցառումները միատեղ կատարելու ծրագիր ունին եւ ռազմական զինավարժութիւնները այդ ծրագրի մէկ մասն կը կազմեն: «Այդ ռազմական զինավարժութիւնները պլանային են, մենք հետեւում ենք դրանց», - շեշտեց պաշտպանութեան նախարարը:

Անդրադառնալով ՆԱԹՕ-Հայաստան յարաբերութիւններուն Օհանեան ըսաւ, որ որպէս ՀԱՊԿ անդամ-երկիր, Հայաստան ինչպէս բազմակողմ, այնպէս ալ երկկողմ ձեւաչափերով կը համագործակցի

Շար.ը էջ 4

## Ռուսաստանէն Հայաստան Եկող Դրամական Փոխանցումները Նուազած Են

Հայաստանի Կեդրոնական Դրամատան նախկին նախագահ՝ Բագրատ Ասատրեան «Ազատութիւն» ռատիօկայանի հետ հարցազրոյցի ընթացքին յայտնած է որ Ռուսաստանը այսօր կը մեկուսանայ աշխարհէն, որու հետեւանքով կը վատթարանայ այդ երկրի տնտեսական իրավիճակը՝ բացասական ազդեցութիւն ձգելով նաեւ հայաստանեան տնտեսութեան վրայ:

Ըստ Հայաստանի կեդրոնական Դրամատան հրապարակած տուեալներուն, Ռուսաստանէն Հայաստան անհատներու կողմէ կատարուած դրամական փոխանցումները նախորդ մի քանի ամիսներուն նուազած են: Մայիս-Յունիս-Յուլիս ամիսներուն Ռուսաստանէն մօտ 4 տոկոսով աւելի քիչ գումար փոխանցուած է Հայաստան, քան նախորդ տարուայ նոյն ժամանակամիջոցին: Փոխանցուած է 455 հազար 82 միլիոն տոլար:

«Մասնաւոր տրանսֆերտները մեր տնտեսութեան ճիւղերից մէկն են: Եթէ վերցնենք ՀՆԱ-ի կառուցուածքը, մասնաւոր, արդիւնաբերութիւնը կամ գիւղատնտեսութիւնը ինչքա՞ն է արտադրում, մօտաւորապէս 2-2.5 միլիարդ տոլար ծաւալի արտադրանք է տալիս: Մենք էդ ծաւալը մօտաւորապէս ստանում ենք Ռուսաստանից մասնաւոր տրանսֆերտների տեսքով», - ըսած է Ասատրեան:

Անոր հաշուարկով, որպէսզի Հայաստանի տնտեսութիւնը տարեկան աճի 7 տոկոսէն աւելի, հարկաւոր է, որպէսզի տարեկան մեր երկիր եկող դրամական փոխանցումները աւելնան առնուազն 15 տոկոսով: Բազմաթիւ գնահատականներու համաձայն՝, Ռուսաստանի տնտեսական վիճակը յառաջիկային միայն պիտի վատանայ, իսկ դրամական փոխանցումներն ալ արդէն այսօր կը կրճատուին, ապա, ըստ Ասատրեանի, 2016-2017 թուականներուն իշխանութիւնները ըլլան ստիպուած պիտի յայտարարել, որ Հայաստանի տնտեսական աճը զէրօ է:

Հայաստանի մէջ մարդիկ, որոնք կ՚ապրին Ռուսաստանէն եկող դրամական փոխանցումներու հաշւոյն, արդէն կը յայտնեն, որ իրենց կեանքը վատացած է: Ռուբլիի աննախադէպ անկումը տոլարի նկատմամբ, հանգեցուցած է դրամական փոխանցումներու կրճատման, քանի որ արժէզրկուելով՝ ռուբլին այսօր աւելի քիչ կ՚արժէ նաեւ Հայաստանի մէջ:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 23-ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 21, 2014
VERDUGO PARK - ԿԼԷՆՏԷՅԼ

FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

# Խաբէութեան եւ ինքնախաբէութեան վարպետները

ԱՐՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Խորհրդարանի աշնանային նստաշրջանի մեկնարկի նախօրէին նախագահ Սերժ Սարգսեանն ազդարարեց այն հիմնական ուղղութիւնները, որոնցով իշխանութիւնը զարգացնելու է քաղաքական պրոցեսները:

Ըստ էութեան, նախագահը չթաքցրեց, որ հետապնդում է երկու կարեւոր խնդիր. ցանկացած գնով աւարտին հասցնել սահմանադրական փոփոխութիւնների եւ այդ շրջանակում պառլամենտական կառավարման համակարգի ներդրման՝ սկսած գործընթացը եւ այդ համատեքստում իշխանութեան անցնցում վերարտադրման այսպէս կոչուած իրական հիմքերի ստեղծումը:

Այդ նպատակով նա փաստացի յայտարարեց իշխանական ռեսուրսների մոբիլիզացա՝ խորհրդարանը հռչակեց որպէս հիմնական ռազմաճակատ, իսկ ՀՀԿ խորհրդարանական խմբակցութեանը՝ այնտեղ խրամատաւորուած զինուորներ: Այս նախապատրաստութիւնները վկայում են, որ նա պատրաստւում է ներքաղաքական վճռական ճակատամարտի, որտեղ որոշուելու է ոչ միայն իր քաղաքական ապագայի, այլեւ գուցէ ողջ իշխանական համակարգի ամբողջականութիւնը պահպանելու ճակատագիրը: Դրան նախագահը գնում է գործողութիւնների յստակ պլանով, տեսլականով, բազմաքայլ կոմբինացիաների պահեստային տարբերակներով, որոնք ուղղուած են մի կողմից համակարգին եւ թիմին վստահութիւն, միւս կողմից՝ մրցակիցներին ու հասարակութեանը իր ուժեղ լինելու մէջ համոզուածութիւն ներշնչելուն: Եւ նա, թւում է, ընտրել է դրա համար ամենայարմար պահը՝ հաշուի առնելով այն իրողութիւնը, որ հակառակ ճամբարը հիմա ամենաքիչն է ընդունակ խոչընդոտելու նպատակների կենսագործմանը:

Զնայած յետագայ անելիքները, մարտավարութիւնը ճշտելու փորձերին՝ ոչ իշխանական ուժերն իրականում զբաղուած են կեղծ օրակարգերի մշակմամբ թէ՛ հասարակութեանը եւ թէ՛ իրենք իրենց խաբելով՝ չկարողանալով դուրս գալ անսկզբունքայնութեան եւ անհետեւողականութեան ճիրաններից:

Բացառութեամբ ՀԱԿ-ի, խորհրդարանական ոչ իշխանական միւս ուժերը դեռ երկու տարի առաջ էին ամրագրել, որ Հայաստանի հասարակական-քաղաքական զարգացման բանալին օր առաջ կառավարման կիսանախագահական համակարգից հրաժարուելը եւ խորհրդարանական համակարգին անցնելն է: Սակայն հիմա, երբ իշխանութիւնն ինքն է նախաձեռնել դրան ուղղուած սահմանադրական փոփոխութիւնները, այդ ուժերը, բացառութեամբ ՀՅԴ-ի, համակարգի փոփոխութիւնը հռչակեցին ժամանակավրէպ: Միակ բացատրութիւնը, որը շրջանառութեան մէջ դրուեց պառլամենտական համակարգին անցնելու հնարաւորութեան մասին առաջին իսկ ակնարկից յետոյ, այն էր, որ Սերժ Սարգսեանն այս նախաձեռնութիւնը սկսել է իր իշխանութիւնն արդէն ԱԺ նախագահի կարգավիճակով յաւերժացնելու նպատակով:

Բայց նման կանխակալ կարծիքն այն պաշտպանողներին երկու առումով դրեց անհեթեթ վիճակի մէջ: Նախ՝ բացի հայեցակարգային որոշ ընդհանրական մօտեցումներից, որոնք ընդամէնը փորձեր էին՝ հիմնաւորելու նոր կառավարման համակարգին անցնելու անհրաժեշտութիւնը, փոփոխութեան որեւէ նախագիծ դեռեւս շրջանառութեան մէջ չկայ, եւ հնարաւոր չէ ասել՝ ինչպիսի՞ լիազօրութիւններով են օժտուելու ԱԺ նախագահն ու վարչապետը, իրական իշխանութիւնը նրանցից որի՞ն է պատկանելու: Այսինքն՝ Սահմանդրական փոփոխութիւնները որպէս իշխանութեան վերարտադրման մեխանիզմ դիտարկողները ոչ թէ կարող են պնդումներ անել եւ վերջնական ախտորոշում տալ, այլ կասկածներ յայտնել: Երկրորդ՝ փաստօրէն դեռ անգամ փոփոխութիւնների նախագիծը հանրութեանը չի ներկայացուել, բայց ընդդիմութիւնը համոզուածութիւն է յայտնում ոչ միայն հանրաքուէի միջոցով փոփոխութիւններն արդէն իսկ անցկացուած լինելու մասին, այլեւ կանխորոշում է ՀՀԿ-ի յաղթանակը գալիք խորհրդարանական ընտրութիւններում եւ ԱԺ նախագահի պաշտօնում Սերժ Սարգսեանի ընտրուելը: Սա ոչ աւել, ոչ պակաս թէ՛ սահմանադրութեան բարեփոխումների պրոցեսում եւ թէ՛ խորհրդարանական գալիք ընտրութիւններում սեփական պարտութիւնը ճանաչելու անուղղակի ինքնախոստովանութիւն էր: Բայց սա դեռ ոչինչ:

Եթէ ընդդիմութիւնը հայաստանեան բոլոր ախտերի, ձախողումների, կուտակուող խնդիրների պատճառ համարում է ներկայիս իշխանութեան բնոյթը, ինչպէս նաեւ՝ պետական իշխանութիւնն ուզուրպացնելու, մոնոպոլացնելու ներկայիս «սահմանադրական» նկրտումները, ապա հենց դա էլ ընդդիմութիւնը պէտք է դարձներ իր հիմնական պոտենցիալ թիրախը եւ այդ հեռանկարի շուրջ էլ կառուցեր իր ռազմավարութիւնը: Երկու օր առաջ տեղի ունեցաւ քառեակի երկու առանցքային ուժերի՝ ԲՀԿ-ի եւ ՀԱԿ-ի ղեկավարներ Գագիկ Ծառուկեանի եւ Լեւոն Տէր Պետրոսեանի հերթական հանդիպումը: Սակայն դատելով հանդիպման մասին հրապարակուած համատեղ պաշտօնական տեղեկատուութիւնից՝ իշխանութեան վերարտադրման կանխարգելման հնարաւոր մեխանիզմների խնդիրն, ըստ էութեան, չի էլ քննարկուել:

Շար.ը էջ 18

# Նախապատրաստուում է նոր հարուած Հայաստանին

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Ատրպէյճանի առաջին փոխվարչապետ Եագուբ Էյուբովը եօյթ ունենալով ռուս-ատրպէյճանական միջկառավարական յանձնաժողովի նիստում յայտարարել է, թէ Ռուսաստանն այն երկիրը չէ, որի հետ կարելի է խօսել պատժամիջոցներով: Նա յայտարարել է, որ ԱՄՆ ու Եւրամիութիւնը սխալ են գործել՝ երկխօսութիւնը փոխարինելով պատժամիջոցներով: Էյուբովը յայտարարել է, որ Ռուսաստանը ծնկի չի գայ, այլ էլ աւելի կ՚ամրանայ:

Հասկանալի է, որ Ատրպէյճանի փոխվարչապետը ռուս-ատրպէյճանական միջկառավարական յանձնաժողովի նիստում չէր կարող Ռուսաստանի ականջը շշոյել, բայց այդ գործողութեան չափազանց բաց եւ ջերմեռանդ տոնը վկայում է, որ Ատրպէյճանը թերեւս իսկապէս բաւականին խոցուել է ՆԱՏՕ-ի Ուէլսի վեհաժողովում անբարեացակամ այն վերաբերմունքից, որ արժանացաւ մի շարք դրուագներում: Ըստ ամենայնի հենց դրա պատճառով է այդօրինակ բաց ռեվերանսը Ռուսաստանի հանդէպ, որն էլ իր հերթին բնականաբար ամրապնդւում է ռուս-ատրպէյճանական ռազմա-տեխնիկական գործակցութեամբ: Օրերս տեղեկութիւն տարածուեց, որ Ռուսաստանը Ատրպէյճանին առաջարկել է արդիականացնել Տ-72 տանկերը: Հաւանաբար Պաքուն ձգտում է հնարաւորինս էժան գին ստանալ Մոսկուայից դրա համար եւ արեւելեան յատկանիշներին բնորոշ շողոքորթութեամբ է զբաղուած:

Իրականում Պաքուի վիճակն իսկապէս մտահոգիչ է, քանի որ Ուէլսում Սարգսեան-Ալիեւ հանդիպման ժամանակ, որ տեղի ունեցաւ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի հովանաւորութեամբ, Քերին փաստացի Ալիեւին բաւական յստակորեն զգուշացրեց ուժի կիրառումը բացառելու մասին, ինչն օրինակ տեղի չէր ունեցել Սոչիում՝ Պուտինի հովանու ներքոյ: Աւելին, ի տարբերութիւն Ռուսաստանի, ԱՄՆ եւ Ֆրանսան բաւական յստակ եւ առարկայօրէն մատնացոյց արեցին Ատրպէյճանի իշխանութեան պատասխանատուութիւնը հայ գերի Կարէն Պետրոսեանի սպանութեան համար:

Պաքուի յոյսն իսկապէս մնացել է Մոսկուան, հակառակ դէպքում Ալիեւն այլեւս անկարող է զբաղուել սահմանային ապակայունացման շանտաժներով, դա կարող է թանկ նստել Պաքուի վրայ: Միաժամանակ պէտք չէ բացառել, որ Ալիեւը Արեւմուտքին ներկայումս էլ շանտաժում է Մոսկուայի հետ յարաբերութեան էլ աւելի սերտացումով: Բայց դա ներկայումս հազիւ թէ յուզի Արեւմուտքում որեւէ մէկին, առաւել եւս, որ հակառակ դէպքում չէր լինի նաեւ Ուէլսի անբարեացկամութիւնը:

Ամենայն հաւանականութեամբ Պաքուն Մոսկուայից ակնկալում է սահմանային ապակայունացման եւս մի փորձի վերաբերեալ համաձայնութիւն: Որ առաջին, կամ օգոստոսեան փորձը Մոսկուայի համաձայնութեամբ էր, բացայայտօրէն ասում էին հենց կրեմլամերձ քաղաքագէտները, ովքեր տեղ ունեն Պուտինին կից խորհուրդներում եւ յանձնախմբերում:

Արեւմուտքն արգելել է Պաքուին լարուածութիւն առաջացնել հակամարտութեան գօտում, բայց եթէ Մոսկուան համաձայնի աջակցել, Պաքուն կարող է մտածել նաեւ չենթարկուելու մասին: Առաւել եւս, որ Մոսկուայի շահագրգռութիւնը նոր լարուածութեան հարցում կարող է մեծ լինել, ակնկալիքով, որ այդ կերպ հնարաւոր կը լինի հակամարտութեան կարգաւորման հարցում Արեւմուտքի բանակցային յաջող նախաձեռնութիւնները տապալել՝ Ուէլսի հանդիպում, Ֆրանսայում ծրագրուող հանդիպում, ու ամէն ինչ կրկին վերադարձնել միանձնեայ ռուսական ազդեցութեան փուլ:

Զի բացառւում, որ հենց դրանով են նաեւ պայմանաւորուած Ուէլսի վեհաժողովից յետոյ ՆԱՏՕ-ի առաջատար երկրների ինտենսիւ շփումները Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան հետ: Եղել են հանդիպումներ ԱՄՆ նոր ռազմական կցորդի հետ եւ գործակցութեան խորացման հաւաստիացում, եղել է հանդիպում պաշտպանական ռազմավարութեան վերանայման ամերիկա-բրիտանական պատուիրակութեան հետ, հանդիպում եւ ՆԱՏՕ վեհաժողովի արդիւնքի քննարկում Հայաստանում Մեծբրիտանիայի դեսպանի հետ:

Այդ ամէնը նաեւ օրինաչափ է ու հասկանալի, Օգոստոսին հայկական զինուժը ցոյց տուեց, որ հանդիսանում է տարածաշրջանային կայունութեան եւ խաղաղութեան առանցքային գործօն եւ տարածաշրջանային լարուածութեան որեւէ հեռանկար կանխելու հարցում առանցքային է աջակցութիւնը հենց հայկական զինուժին: Հետաքրքրական է, որ ՆԱՏՕ-ն այդ հանգամանքին արձագանքեց բաւական արագ եւ բաւական պատրաստակամօրէն, այն դէպքում, երբ Ռուսաստանն ընդամէնը ռազմա-տեխնիկական գործակցութեան նոր առաջարկներ ներկայացրեց Ատրպէյճանին:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «ԶՈՒ-ն Իրաւունք Չունէր Մասնակցել Մարտի 1-ին».Անդրանիկ Քոչարեան

«Չի լինում այնպէս, որ մի կողմից Վլադիմիր Գասպարեանը յայտարարում է, թէ առնչութիւն չի ունեցել Մարտի 1-ին, միւս կողմից էլ հաստատում է, որ յանձնարարութիւն էր ստացել կառավարութեան շէնքը պահպանել»: Այս մասին NEWS.am-ի թղթակցին յայտնեց Մարտի 1-ի գ գործով «փաստահաւաք խմբի» նախկին անդամ» ՊՆ նախկին փոխնախարար Անդրանիկ Քոչարեանը՝ անդրադառնալով ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի յայտարարութիւններին:



«Մարտ 1-ի փաստահաւաք խումբի անդամ Անդրանիկ Քոչարեան

Նա նշեց, որ քննչական խումբը տեղեկատուութիւնն ունէր, որ գինուորական ոստիկանութիւնը ծառայութիւն տանում է կառավարութեան շէնքի մօտ, որովհետեւ այնտեղ տեղակայուած են եղել իրենց տեխնիկական միջոցները, որը, իրենց կարծիքով, եղել է անթոյլատրելի եւ նշանակում է, որ զինուած ուժերի որոշակի մասնակցութիւնն է եղել մարտիմեկեան դէպքերին:

Ինչ վերաբերում է Վլադիմիր Գասպարեանի հարցաքննութեանը, ապա Անդրանիկ Քոչարեանը դա համարում է նախաքննական մարմնի խնդիրը, «իրենք պէտք է գործողութիւններ իրականացնեն, որի մասին տեւական ժամանակ է՝ հասարակութիւնը տեղեկութիւն չունի՝ նախաքննական մարմին կայ, թէ չկայ, ղեկավարը փոխուել է, թէ ոչ, ընդհանրապէս Մարտի 1-ի թեման ինչ վիճակում է».«Խնդիրը նախաքննական մարմնի գործողութիւնների մէջ է, որը այս պահին ըստ էութեան գոյութիւն չունի, իսկ եթէ գոյութիւն չունի այդ մարմինը եւ ղեկավարը չկայ, ի՞նչ հարցաքննեն նրան: Եթէ մի բան գաղտնի են պահում, նշանակում է՝ այդ ղեկավարը գոյութիւն չունի իրականում: Մարտի 1-ին առնչութիւն ունեցել են բոլոր պետական կառոյցները, ուրիշ բան՝ նրանք գործել են իրենց սահմանադրական լիազօրութիւններ շրջանակում, թէ ոչ Զինուած ուժերի մասնակցութիւնը վիճահարոյց հարց է, որը խօսում է այն մասին, որ նրանք իրաւունք չունէին մասնակցել մարտիմեկեան դէպքերին»:

Յիշեցնենք, որ Վլադիմիր Գասպարեանը ասել էր հետեւեալը.«Ես որպէս էն ժամանակ ռազմական ոստիկանութեան պետ, հիմա որպէս ոստիկանութեան պետ, ուղղակի չեմ զբաղուել այդ գործով: Մարտի մէկին իմ մասնակցութիւնը եղել է այնքանով, որ ռազմական ոստիկանութիւնը կառավարութեան շէնքի պահպանութիւնն է վերցրել իր վրայ, եւ ես օպերատիւ խմբով արդէն դէպքի վայրից յետոյ տեղազննութիւններին մասնակցել ենք նոյնպէս: Քննութեան ընթացքի հետ ես ուղղակի ծանօթ չեմ, եւ կարծում եմ՝ այնքան ծեծուած թեմայ է. ես ինչ էլ ասելու լինեմ, ասելու եմ այն, ինչ որ կան լրատուամիջոցներում»:

# «Քառեակի Կուսակցութիւնները Դարձել Են ԲՀԿ Կցորդը». Արամ Սարգսեան

«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանի համոզմամբ՝ Գագիկ Ծառուկեանը երբեք չի պահանջի Սերժ Սարգսեանի հրաժարականը, իսկ ոչ իշխանական քառեակի քայլերը չեն կարող բերել համակարգային իշխանափոխութեան:

Յայտնի է, որ քառեակը մինչեւ Սեպտեմբերի 30-ը վերջնաժամկէտ է ներկայացրել իշխանութեանը՝ առաջ քաշուած 12 կէտերը կատարելու համար: Ընդդիմադիրները չեն բացառում «թէժ աշնան» տարբերակը, եթէ իշխանութիւնը հրաժարուի կատարել իրենց պահանջները, իսկ անցած շաբաթ ԲՀԿ-ն յայտարարեց, որ պատրաստ է ցանկացած ֆորսմաժորային զարգացման:



«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան

«Գագիկ Ծառուկեանը երբեք չի ասել, որ ինքը գնում է իշխանափոխութեան, ինքը երբեք չի ասել, որ ինքը ընդդիմադիր է, ինքը երբեք չի պահանջել նախագահի հրաժարականը, ինքը չի ասել, որ ինքը արտահերթ ընտրութիւնների կողմնակից է: Ես համոզուած եմ, որ նման բան չի ասելու, որովհետեւ տեսնում եմ, որ էդ կուսակցութիւնները անկախ չեն ու մի մարդու որոշելով չեն», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Արամ Սարգսեանը՝ յաւելելով, թէ իրականում, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը շատ քիչ է տարբերւում Հանրապետականից:

«Նոյն Բարգաւաճն էլ, Հանրապետականն էլ ընտրութիւնների ժամանակ փող են բաժանում: Քաղաքականութիւնը տեսնում են նիւթական միջոցներով եւ տնտեսական հնարաւորութիւններով եւ ամենակարեւորը՝ գաղափարական առումով երկուսն էլ Եւրասիական տնտեսական մոդելի կողմնակից են: Եւ երբ որ իրենք խօսում են համակարգային փոփոխութիւնից, ինձ համար ծիծաղելի է: Ի՞նչ համակարգային փոփոխութիւն, եթէ գնում ես Պուտին - Լուկաշենկօ - Նազարբաեւ օրինակին, որը ոչ միայն հետ է, այլեւ ծիծաղելի է առաջադէմ աշխարհի համար», - ընդգծեց Սարգսեանը:

Ըստ Սարգսեանի, անգամ եթէ ԲՀԿ-ն ու իր դաշնակիցները գան իշխանութեան, խոշոր հաշուով, Հայաստանում ոչինչ չի փոխուի, ու կը մնայ նոյն օլիգարխիկ համակարգը. - «Եթէ Հայաստանը պիտի զարգանայ Եւրասիական մոդելով, էական չի, թէ իշխանութեան ով է գալու: Բացի այդ՝ ես «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը երբեք էլ չեմ համարել կուսակցութիւն՝ քաղաքական առումով: Դա Ռոբերդ Քոչարեանի ստեղծած կառոյցն էր, որտեղ մարդիկ համախմբուել են Գագիկ Ծառուկեանի նիւթական ու ֆինանսական միջոցների շուրջ, ով էլ, իր հերթին, իր նիւթական ու ֆինանսական միջոցները պաշտպանելու համար քաղաքական ուժ է ձեւաւորել»:

«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդի գնահատմամբ՝ ոչ իշխանական քառեակի կուսակցութիւնները այսօր դարձել են ԲՀԿ-ի կցորդը, ինչը հիասթափութիւն է առաջացրել հասարակութիւնում. - «Ռոբերդ Քոչարեանի իշխանութեան տարիներին խնդիրը բերուեց նրան, որ եթէ ընդդիմութիւն ես, չպիտի ունենաս աշխատելու, Հայաստանում գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւն, որովհետեւ պետութիւնը չի կարող թողնել, որ դու տնտեսական միջոցներ ունենաս, որ կիրառէս պետութեան դէմ: Դա ուղիղ էր ասւում: Դրանով իսկ կազմակերպուած պետութիւն ձեւաւորելու էդ գաղափարի շուրջ Քոչարեանը փորձեց ձեւաւորել նաեւ կազմակերպուած կուսակցութիւններ, եւ էդ կոնտեքստում հիմնական բաղադրիչը դրեց փողը»:

«Իսկ մնացած կուսակցութիւնները, դժբախտաբար, ընդունեցին խաղի էդ կանոնները, որ քաղաքականութեան մէջ փող է պէտք, եւ ասեցին, որ եթէ փողով է, մենք էլ կը ճարենք փող ունեցող համապատասխան մարդու, եւ գնացին էդ մօտեցման յետեւից՝ վերածուելով ԲՀԿ-ի կցորդի՝ նրա ասածները հիմնաւորելու, նրան չհակադրուելու, ինչը հասարակութիւնից դուրս է, եւ հիասթափութիւն առաջացրեց քաղաքականութեան ու քաղաքական գործիչների հանդէպ, ինչն էլ բերեց էսօրուայ էս վիճակին», - նշեց ընդդիմադիր գործիչը:

Հարցին, թէ իր կարծիքով Դաշնակցութիւն, Հայ ազգային կոնգրէս եւ «Ժառանգութիւն» կուսակցութիւնները արդեօք ԲՀԿ կցորդներ են դարձել, Սարգսեանն արձագանքեց, որ պարզ ապէս տեսնում է դա:

# Վերաքննիչը Մերժեց Վոլոդիա Աւետիսեանի Գործով Բողոքը

Վերաքննիչ քրէական դատարանը Սեպտեմբեր 16-ին մերժեց պահեստազօրի գնդապետ, ղարաբաղեան պատերազմի մասնակից Վոլոդիա Աւետիսեանի շահերի ներկայացուցիչ Արա Զաքարեանի վերաքննիչ բողոքը: Զաքարեանը խնդրում էր բեկանել Արաբկիր եւ Քանաքեռ Զէյթուն վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանի դատավճիռը, որով Աւետիսեանը դատապարտուել էր ին 6 տարուայ ազատազրկման դատապարտելու մասին:

Դատարանը գործը քննեց ընդամէնը մի քանի ժամում: Վճռին սպասող Աւետիսեանի հարազատներն ու ընկերները որոշումն ընդունեցին ակնյայտ զայրոյթով:

Աւետիսեանի փաստաբան Արա Զաքարեանն ասաց, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կը բողոքարկի Վճռաբեկ դատարանում:

Զաքարեանը վերաքննիչ բողոքով պահանջում էր, որպէսզի դատարանը բեկանի Արաբկիր եւ Քանաքեռ Զէյթուն վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանի որոշումը եւ գործն ուղարկի լրացուցիչ քննութեան Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարան կամ Արմաւիր մարզի ընդհանուր իրաւասութեան դատարան, քանի որ, ըստ պաշտպանի, Վոլոդիա Աւետիսեանին վերագրուող յանցագործութիւնը կատարուել է հենց այդ տարածքներում:

Պաշտպանը խնդրում էր մեղմացնել Վոլոդիա Աւետիսեանի պատժաչափը, որպէս զի նա հնարաւորութիւն ունենայ համաներմամբ ազատ արձակուել:

Պաշտպան Զաքարեանը նաեւ մի շարք միջնորդութիւններ ներկայացրեց, այդ թւում պահանջեց հարցաքննել պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանին:

«Վերջինս բազմաթիւ անգամ հրապարակաւ ասել է, որ 2013 թուականի Մայիս-Յունիս ամիսներին հանդիպել է Վոլոդիա Աւետիսեանին եւ ձեռք բերել որոշակի պայմանաւորուածութիւններ՝ կապուած վերջինիս կողմից բարձրացրած ազատամարտիկների սոցիալական պայմանների հարցի շուրջ: Սակայն Վոլոդիա Աւետիսեանը խախտել է պայմանաւորուածութիւնը, որի արդիւնքում յայտնուել է նման իրավիճակում: Պաշտպանութեան նախարարի յայտարարութիւնից ակնյայտօրէն երեւում է, որ նրան կարող են յայտնի լինել գործի համար նշանակութիւն ունեցող հանգամանքներ, մասնաւորապէս, նախարարի նշած՝ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնների խախտումը», - յայտարարեց պաշտպանը:

Դատաւորը մերժեց միջնորդութիւնները՝ նշելով, որ նախարար Օհանեանի՝ դատարանում ցուցմունք տալը որեւէ առնչութիւն չունի առաջադրուած մեղադրանքի հետ:

Նախքան դատական ակտի հրապարակումը Վոլոդիա Աւետիսեանը յայտարարեց, թէ չի վստահում Հայաստանի արդարադատութեանը:

Աւետիսեանի մարտական ընկեր Գագիկ Սարուխանեանի խօսքով՝ Հայաստանի դատարաններն այսօր կատարում են քաղաքական հրահանգներ. - «Մեր կարծիքը ճիշդ էր, որ Հայաստանում չկայ իրական դատարան, ազատ դատավարութիւն: Ասուած է մարդը պիտի նստի, ուրեմն՝ նստում է»:

Պաշտպանական կողմը շարունակում է պնդել, որ ազատամարտիկի նկատմամբ կայացուած վճիռը քաղաքական հաշուեյարդար է՝ իշխանութիւններին քննադատելու եւ հակակառավարական ցոյցեր նախաձեռնելու համար:

www.massisweekly.com

# ԼՈՒՐԵՐ

## Չինաստանի Հետ Համագործակցութիւնը Հայաստանի Առաջնահերթութիւններից Մէկն է

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեանը Սեպտեմբերի 16-ին ընդունեց Հայաստանի Հանրապետութիւնում Չինաստանի Ժողովրդական Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Թիան Ջանչունին, ում դիւանագիտական առաքելութիւնը Հայաստանի Հանրապետութիւնում մօտենում է աւարտին:

ՀՀ ԱԺ հասարակայնութեան եւ տեղեկատուութեան հետ կապերի վարչութիւնից յայտնում են, թէ ՀՀ ԱԺ նախագահը նշեց, որ Չինաստանի Ժողովրդական Հանրապետութեան հետ համագործակցութեան Հայաստանի Հանրապետութեան առաջնահերթութիւններից մէկն է, եւ վերջին շրջանում Չինաստանի հետ համագործակցութիւնն աւելի է խորանում, ինչի ապացոյցն է Չինաստանի օժանդակութիւնը մեր երկրում իրականացուող բազմաթիւ ծրագրերին: ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակեանը բարձր գնահատեց Լեռնային Ղարաբաղի հարցում Չինաստանի Հանրապետութեան հաւասարակշռուած դիրքորոշումը: Անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած միջոցառումներին՝ ՀՀ ԱԺ նախագահ Գգալուստ Սահակեանը նշեց. «Միջոցառումների շարքը, որը նախատեսւում է յաջորդ տարի, նպատակ ունի հասնելու ցեղասպանութիւնների դատապարտմանը ողջ միջազգային հանրութեան կողմից»: Նա յոյս յայտնեց, որ յաջորդ տարի Երեւանում նախատեսուող միջոցառումներին կը մասնակցի նաեւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետութեան պատուիրակութիւնը:

Դեսպան Թիան Ջանչունը, իր երախտագիտութիւնը յայտնելով ՀՀ ԱԺ նախագահին արդիւնաւէտ համագործակցութեան համար, անդրադարձաւ հայ-չինական բարեկամութեանը, որը դարերի պատմութիւն ունի, եւ վստահեցրեց, որ Հայաստանի եւ Չինաստանի համագործակցութիւնը հետագայում առաւել կը խորանայ եւ կը զարգանայ:

Հանդիպման աւարտին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեանը շնորհակալութիւն յայտնեց դեսպանին արգասաբեր համագործակցութեան համար՝ մաղթելով նրան յաջողութիւններ բոլոր նախաձեռնութիւններում:

## Թուրք Նախարար. «Մենք Մեր Լուման Ներդրել Ենք Հայաստանի Հետ Յարաբերութիւններում»

Թուրքիայի ԵՄ-ի հարցերով նախարար Վոլքան Բոզքըրը յայտարարել է, որ Թուրքիան իր լուման է ներդրել Հայաստանի հետ յարաբերութիւնների առաջխաղացման գործում:

Լիզպոն իր այցի ընթացքում՝ նախարարն անդրադարձել է հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանը, գրում է թուրքական «Sabah»-ը: Նա յատկապէս ընդգծել է նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նամակի կարեւորութիւնը, որում վերջինս ցաւակցել էր հայերին՝ Ապրիլի 24-ի նախօրեային:

«Այդ նամակով մենք ցոյց տուեցինք, որ թերթում ենք սրտաճմլիկ իրադարձութիւնների էջը եւ խաղաղութեան ձեռք պարզում: Եթէ մեր գործընկերները սեղմեն այն, մենք կը կարողանանք նոր էջ բացել: Չի կարելի ապագայ շարժուել ատելութեամբ», - յայտարարել է Բոզքըրը:

Նախարարը յոյս է յայտնել, որ երկու երկրների ապագան կառուցուելու է փոխադարձ հանդուրժողականութեամբ: «Այսուհետ բոլորը պէտք է խաղաղ ապրեն եւ մոռանան անցեալի միջադէպքերը: Մենք՝ որպէս Թուրքիայի Հանրապետութիւն, մեր լուման ներդրել ենք», - ընդգծել է նա՝ «մոռանալով» յիշատակել, որ հայ-թուրքական արձանագրութիւնները սառեցուել են՝ Անգարայի կողմից Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերեալ նախապայմաններ մտցնելու պատճառով:

## Ադրբեջանը Բողոքի Նոտա Է Յղելու Իսպանիայի Իշխանութիւններին

Անցած շաբաթ Բասկերի երկրի խորհրդարանը ընդունել է մի բանաձեւ, որում ընդգծում է՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ունի ինքնորոշման իրաւունք, եւ հակամարտութեան կարգաւորման միակ հիմքը այդ ժողովրդավարական իրաւունքի իրականացումն է: Բանաձեւում նաեւ նշւում է, որ ԼՂ իշխանութիւնները պէտք է մասնակցեն բոլոր քննարկումներին, որոնք վճռորոշ կը լինեն երկրի ապագայի համար:

Բասկերի երկրի լրատուամիջոցները Լեռնային Ղարաբաղը, որի անկախութիւնը անցած շաբաթ ճանաչել է երկրի Գիպուզկոա նահանգը, ներկայացնում են այսպէս. - «Կովկասեան տարածաշրջանում գտնուող հայերով բնակեցուած մի փոքրիկ երկիր, որն ունի լրջագոյն դժուարութիւններ անկախութեան եւ ճանաչման հասնելու ճանապարհին»:

Ղարաբաղում այս իրադարձութիւնը որակում են որպէս Եւրամիութեան տարածքային խորհրդարանի կողմից Լեռնային Ղարաբաղի անկախութեան ճանաչման փաստ:

Պաշտօնական Բաքուի սպասուած արձագանքը չուշացաւ: «Թրենդ» գործակալութեան տեղեկացմամբ՝ Իսպանիայում Ադրբեջանի դեսպանը յայտարարել է, թէ բողոքի նոտա է ուղարկելու Իսպանիայի իշխանութիւններին՝ Բասկերի երկրի կողմից Ղարաբաղի անկախութիւնը ճանաչելու առնչութեամբ:

«Դեսպանութիւնը Բասկերի երկրի առաջնորդների հետ հանդիպում է պահանջել՝ բացատրութիւններ ստանալու նպատակով. Հանդիպման ժամկէտները դեռեւս չեն յստակեցուել», - դեսպան Ալթայ Էֆենդիեւի խօսքերն է մէջբերել ադրբեջանական գործակալութիւնը:

## Բարոզու. «ԵՄ-Ն Յարգում Է Հայաստանի Որոշումը, Բայց Ափսոսում Է Դրա Համար

Եւրամիութիւնը յարգում է ասոցացման համաձայնագրից հրաժարուելու Հայաստանի որոշումը, անգամ եթէ ափսոսում է դրա համար: Այս մասին Սեպտեմբերի 12-ին Կիեւում յայտարարել է Եւրայանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուէլ Բարոզուն: NEWS.am -ին Եւրայանձնաժողովի մամուլի ծառայութիւնից յայտնեցին, որ Բարոզուն անդրադարձել է Արեւելեան գործընկերութեան քաղաքականութեանը եւ նշել, որ այդ քաղաքականութիւնը հրապարակային եւ թափանցիկ էր: «Մենք երբեք մեր քաղաքականութիւնը որեւէ մէկի դէմ չենք ուղղել: Մենք երբեք չենք ձգտել բացառող յարաբերութիւնների: Հակառակը, միշտապէս մեր արեւելեան գործընկերներին խրախուսել ենք լաւ յարաբերութիւններ ունենալ հարեւանների հետ»,- նշել է նա:



Եւրայանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուէլ Բարոզու

Ըստ Եւրայանձնաժողովի նախագահի՝ Հայաստանի օրինակը ուսանելի էր: «Այդ երկիրը եւս ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի բանակցութիւններ էր վարում, բայց վերջին պահին ուժեղ ճնշման տակ որոշեց չստորագրել: Քննադատո՞ւմ ենք մենք այս որոշումը: Դադարեցնո՞ւմ ենք առեւտուրը: Նրա դէմ միջոցնե՞ր ենք ձեռնարկում: Իհարկէ՝ ոչ: Մենք յարգում ենք Հայաստանի որոշումը, անգամ եթէ ափսոսում ենք դրա համար»,- ասել է նա:

Ըստ Բարոզուի՝ Ուկրանիայի դէպքում տեղի ունեցածը, ցաւոք, ճիշդ հակառակն էր: «Ուկրանիան ցանկանում էր ստորագրել, եւ վերջապէս, ստորագրեց Ասոցացման համաձայնագիր իր, իսկ Ռուսաստանը չյարգեց դա: Նա չցանկացաւ, որպէսզի Ուկրանիան իր ուղին ազատ ընտրի կամ որոշի իր ապագան: Եւ դա, իհարկէ, չէր կարող ընդունուել»,- ընդգծել է բարձրաստիճան պաշտօնեան:

Իր խօսքի վերջում՝ Ժոզէ Մանուէլ Բարոզուն յայտարարել է. «Մենք հաւատարիմ ենք Ուկրանիայի միասնականութեանը եւ եւրոպական խաղաղութեան ու կայունութեանը: Մենք պատրաստ ենք միասին աշխատել՝ յանուն միացեալ Ուկրանիայի՝ միաւորուած մայրցամաքում»:

## Թուրքիայի Ոստիկանութեան Ակադեմիայում Նաեւ Հայերէն Կը Սովորեն

Թուրքիայի Ոստիկանական Ազգային Ակադեմիայում շուտով դասաւանդուելու է նաեւ հայերէնը: «Տէյլի Սապահ»-ը օրերս գրել է, որ ոստիկանութեան ակադեմիա ընդունուած կամ վերապատրաստուող ոստիկանութեան ապագայ սպաները առաջիկայում սովորելու են քրդերէն, հայերէն, արաբերէն, որոնք լայնօրէն օգտագործւում են երկրի շատ մասերում:

Այս դասընթացների միջոցով Թուրքիայի ոստիկանութիւնը նպատակ ունի բարելաւել երկրի ազգային փոքրամասնութիւնների հետ հաղորդակցուելու աշխատանքը:

---

## Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ

*Շարունակուածէջ 1–էն*

Նառոլբերգականն էր հայ ժողովրդի պատմութեան մէջ, եւ այդ ընթացքում նրանք կարողացան հերոսանալ: Մենք այսօր պէտք է մեր սերունդներին փոխանցենք այս հերոսների կենսագրութիւնը, նրանց կատարած գործերը: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, Սոցիալ Դեմոկրատական Հնչակեան կուսակցութիւնը մեր ազգի ազգային արժէքներն էին, որովհետեւ նրանք դարից աւել կարողացան պահել-պահպանել մեր ազգայինը»,-իր խօսքին մէջ ըսաւ Նախարար Հ. Յակոբեան:

«Յաւերժի ճամբու կերտիչներէն» խորագրով գիրքը գլխաւորաբար հնչակեան անյայտ գործիչներու գործունէութիւնը լուսաբանող կենսագրական ակնարկներու ինքնատիպ ժողովածու է, որ մասնագէտներուն կ'օգնէ ճիշդ հասկնալու եւ գնահատելու Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ունեցած տեղն ու դերը հայ ազատագրական պայքարի պատմութեան ընդհանուր խորապատկերին վրայ:

---

## Սէյրան Օհանեան

*Շարունակուածէջ 1–էն*

նաեւ Հիւսիսատլանտեան դաշինքի մասնակից երկիրներուն հետ:

Պաշտպանութեան նախարարի համաձայն, Հայաստանի ռազմական ու ռազմաքաղաքական ղեկավարութիւնը հաւասարակշռուած քաղաքականութիւն կը վարէ: «Լինելով ՀԱՊԿ անդամ-երկիր, Հայաստանը, ինչպէս բազմակողմ, այնպէս ել երկկողմ ձեւաչափերով համագործակցում է նաեւ Հիւսիսատլանտեան դաշինքի մասնակից երկրների հետ: Այդ յարաբերութիւնները նորմալ կերպով զարգանում են, եւ բոլոր միջոցառումները իրականացւում են», - ըսաւ Սէյրան Օհանեանը՝ աւելցնելով, որ Ուքրանական ճգնաժամը ու Արեւմուտքի ու Ռուսաստանի միջեւ առկայ լարուածութիւնը Հայաստանի վրայ որեւէ ազդեցութիւն չեն ունեցած:

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

### ԲԱՑ ՊԱՏԵՐԱԶՄ ՏԱՀԷՇ-ԻՆ ԴԷՄ

Սպիտակ Տունը յայտարարեց, որ Ուաշինկթըն կը գտնուի ՏԱՀԷՇ-ին դէմ պատերազմական դրութեան մէջ: Միացեալ Նահանգներու պաշտպանութեան քարտուղարութեան բանբեր Ամիրալ Ճոն Քըրպի յայտարարեց, որ Ուաշինկթըն իր վերջին պատերազմը չի մղեր Իրաքի մէջ, այլ պիտի շարունակէ հարուածել ահաբեկչական կազմակերպութիւնները: Քըրպի նշեց, որ իրենք ՏԱՀԷՇ-ին դէմ պիտի կռուին այնպէս ինչպէս կը շարունակեն հարուածել Քայիտա կազմակեպրութիւնը: Եզրափակելէ ետք իր Սէուտական Արաբիա եւ Թուրքիա կատարած այցելութիւնները, Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ճոն Քերի ժամանեց Եգիպտոս, ուր քննարկեց ՏԱՀԷՇ-ին դէմ պայքարելու միջոցները եւ ծրագիրները: Թուրքիոյ վարչապետ Ահմատ Տաւուտօղլու նախապէս նշած էր, որ ՏԱՀԷՇ տիրացած է Իրաքի մէջ լքուած ամերիկեան արդիական զէնքերու մեծամասնութեան: Վարչապետը սխալ համարեց Սուրիոյ նախագահին օժանդակելու առաջարկը:

Քէրի նախապէս յայտարարած էր, որ Թոշակառու զօրավար Ճոն Ալլէն նշանակուած է ահաբեկչութեան դէմ պայքարող միջազգային դաշինքի համակարգողը: Քէրիի համաձայն, Ալլէն կը համարուի վեթերան զինուորական մը, որ մեծ դեր խաղցած էր Իրաքի պատերազմին ընթացքին: «Ալլէն կը գիտակցի, թէ իր նոր առաքելութեան առջեւ ցցուած են լուրջ մարտահրաւէրներ: Ան կը համարուէր ահաբեկչական կազմակերպութիւններուն դէմ իրաքեան զինուորական խմբակներ կազմող եւ մարզող գլխաւոր պատասխանատուն», ըսաւ Քէրի:

Իսկ Իրաքի վարչապետ Հայտար Ապատի երկու օր առաջ հրահանգեց կասեցնել Իրաքի քաղաքներուն վրայ գործադրուած օդային յարձակումները:

Իսկ Իրանի Շուրայի Խորհուրդի Նախագահ Ալի Լարիջանի կարծիք յայտնեց, որ շրջանին մէջ ամերիկացիներուն ներկայութիւնը կը համարուի խաղալ՝ զինամթերանոցի մը հետ:

## ԼԻԲԱՆԱՆ

### ԸՆՏՐԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՄԲՈՂՋԱՑՈՒՄ

Նոյեմբեր 16-ին նախատեսուած Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն վերջնական ճակատագիրը տակաւին անորոշ է, սակայն քաղաքական խմբակցութիւնները ներկայացուցած են իրենց ընտրական թեկնածութիւնները, որպէս նախապատրաստութիւն հաւանական որեւէ անակնկալի: Երեքշաբթի գիշեր աւարտեցաւ թեկնածութիւններու ներկայացման ժամկէտը՝ աւելի քան 500 թեկնածութեան թղթածրարներով: Ասով հանդերձ, երկրին մէջ տիրող ընդհանուր մթնոլորտը կը յուշէ Խորհրդարանի պաշտօնավարութեան հաւանական երկարաձգում մը:

Ներքին գործոց նախարարութեան մէջ տեղի ունեցաւ ապահովութեան կեդրոնական խորհուրդի արտակարգ նիստ մը, որուն ընթացքին քննարկուեցան երկրի ապահովական զարգացումները եւ խորհրդարանական ընտրութիւններ կայացնելու պատրաստութիւնները: Նախարար Նուհատ Մաշնուքի գլխաւորած նիստին ընթացքին զինուորական եւ ապահովական կառոյցները ներկայացուցին իրենց տեսակէտները՝ ապահովական կացութեան եւ ընտրական թղթածրարին մասին:

Մաշնուք բոլոր կառոյցներէն պահանջեց մէկ շաբթուան ընթացքին ներկայացնել տեղեկագիրներ, որոնց մէջ կ'արժեւորեն երկրի ապահովական կացութիւնը եւ ընտրական հոլովոյթին հետ կապուած խնդիրները, ինչպէս նաեւ ընտրութիւններ կայացնելու համար անհրաժեշտ մարդուժի եւ սարքերու առկայութիւնը:

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի պահանջեց ջնջել քաղաքական յարանուանութեան դրութիւնը:

Անոր համաձայն, վերջին հանգրուանի զարգացումները ապացուցեցին, որ նշեալ երեւոյթը պէտք է արմատախիլ ընել ոչ միայն Լիբանանէն, այլ նաեւ Արաբական Աշխարհէն: Պըրրի ցաւ յայտնեց, որ Իսրայէլի դէմ կռուելու փոխարէն այսօր կը նկատուին ներքին մահմետական բախումներ, որոնք մեծագոյն վտանգը կը ներկայացնեն:

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻՆ

Վարչապետ Թամմամ Սալամ վարչապետարանին մէջ տեսակցեցաւ Եւրոմիութեան երկիրները ներկայացնող դեսպաններու պատուիրակութեան հետ, գլխաւորութեամբ Պէյրութի մօտ Եւրոմիութեան ներկայացուցիչ Անճելինա Էխհորսթին: Վերջինս տեսակցութենէն ետք յայտարարեց, որ երկրին մէջ կը տիրէ մտահոգիչ կացութիւն: Եւրոպացիները ցաւակցութիւն յայտնեցին Արսէլի զոհերուն համար, բարի ապաքինում մաղթեցին վիրաւորներուն, դատապարտեցին ահաբեկչական գործողութիւնները եւ իրենց ամբողջական զօրակցութիւնը յայտնեցին Լիբանանի կառավարութեան, բանակին ու ներքին ապահովութեան ուժերուն: Էխհորսթ նշեց, որ Լիբանանի մէջ մէկ միլիոն 200 հազար սուրիացի գաղթականներու ներկայութիւնը կը համարուի վտանգաւոր մարտահրաւէր մը եւ դիտել տուաւ, որ Պէյրութ կարիք ունի միջազգային օգնութիւններու եւ ապահովական ու տնտեսական զօրակցութեան: Եւրոպացի դիւանագէտը կոչ ուղղեց շուտով ընտրելու երկրի նոր նախագահը, միացեալ դիրքորոշում մը որդեգրելու ահաբեկչութեան դէմ:

Իսկ ՄԱԿի մօտ Լիբանանի մնայուն ներկայացուցիչ Նաուաֆ Սալամ դիտել տուաւ, որ Լիբանանին զօրակցող միջազգային խորհրդաժողովը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 27-ին՝ Նիւ Եորքի մէջ:

## ԸՆԿ. ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝ LEBANON FILES-ԻՆ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ, պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան հարցազրոյց մը տուաւ Lebanon Files համացանցային կայքէջին, որուն մէջ անդրադարձաւ լիբանանեան վերջին զարգացումներուն: Նոր նախագահի ընտրութեան հարցով Ընկ. Գալփաքեան շեշտեց ընտրութեան նիստերուն մասնակցելու կարեւորութիւնը, յիշեցուց որ երեսփոխանի պարտականութիւն է Խորհրդարան ուղղուիլ եւ ընտրութեան մասնակցիլ:

«Քրիստոնեայ երեսփոխաններ կը զբաղին շատ մը այլ թղթածրարներով, մինչ պահանջուածը նոր նախագահ ընտրելն է», ըսաւ ան: Ընկ. Գալփաքեանի համաձայն, զանազան առաջարկներ ներկայացնելու փոխարէն, ինք զինք քրիստոնեայ մեծագոյն պլոքը համարող խմբաւորումը պէտք է ընդառաջէ 14 Մարտի քաղաքական ուժերու հրաւէրին եւ բանակցի՝ նախագահական հարցին լուծում մը գտնելու համար: Ընկ. Գալփաքեան ցաւ յայտնեց, որ երկու հայ երեսփոխաններ կը բացակային նախագահի ընտրութեան նիստերէն եւ յիշեցուց, որ լիբանանահայութիւնը միշտ կանգնած է պետութեան ու նախագահութեան կողքին: Պետական երեսփոխանը վերահաստատեց, որ հակառակ լիբանանեան տարակարծութիւններուն, հայ ազգային կուսակցութիւնները յաճախ տեսակցութիւններ կ'ունենան, քննարկելու համար հայութիւնը հետաքրքրող հարցերը՝ ներառեալ Ցեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչումը եւ տեղահանուած սուրիահայերու խնդիրները: Խօսելով Լիբանան ապաստանած սուրիահայերուն մասին Ընկ. Գալփաքեան դիտել տուաւ, որ անոնք կը դիմագրաւեն մեծ խնդիրներ եւ լուրջ մարտահրաւէրներ, սակայն համագործակցութեամբ լուծումներ կը գտնուին, ապահովելու համար սուրիահայերու կրթական եւ բնակեցման անհրաժեշտութիւնները, նաեւ լուծելու ամէնօրեայ դժուարութիւնները: «Լիբանանեան քաղաքական տարակարծութիւնները պէտք չէ ազդեն ներհայկական յարաբերութիւններուն վրայ», ըսաւ պետական երեսփոխանը: Ան կոչ ուղղեց աշխուժացնելու Խորհրդարանի աշխատանքը:

«Պէտք չէ թոյլատրել հաստատութիւններու եւ քաղաքացիներուն ամէնօրեայ աշխատանքներուն խոչընդոտումը: Խորհրդարանը պէտք է վերաշխուժանայ, որպէսզի լուծուի աշխատավարձերու յաւելումի խնդիրը», ըսաւ Ընկ. Գալփաքեան:

Անոր խօսքով, ծայրայեղականութիւնը ծնունդ կու տայ ծայրայեղականութեան: Ընկ. Գալփաքեան կոչ ուղղեց յստակ դիրքորոշում որդեգրելու ահաբեկչութեան դէմ, պահանջեց ապօրինի բոլոր զէնքերուն վերացումը եւ նշեց, որ լիբանանցիները պէտք է խուսափին ներքին խռովութիւններէն: Աւարտին, ան կոչ ուղղեց չափաւորականութեան եւ շեշտեց, որ Լիբանան կարիք ունի չափաւորական եւ լայնախոհ ղեկավարներու:

ԶԵԿՈՒՑՈՒՄ ԵՒ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ՝
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
60-ամեակի Յանձնախումբի

ՀԱՅ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ
եւ անոր նպաստը Հայապահպանութեան

Կը զեկուցէ՝
ՀՐԱՉ ԿԷՕՋԻՊԷՕՅՈՒՔԵԱՆ

Կը ցուցադրուին՝
Հայկական Հնամեայ Գորգեր



Ուրբաթ
Հոկտեմբեր 3, 2014
Ժամը 7:30-ին

Կլէնտէյլի Կեդրոնական Գրադարան
222 E. Harvard St., Glendale

Մուտքը ազատ
Հիւրասիրութիւն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ Ո՞ՒՐ Է(Ր) ՀԱՅՈՑ ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԸ

*ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ*




Հայաստանի անկախութեան տարեդարձին նուիրուած այս յօդուածի միտքն ու խորագիրը երբ բարեկամի մը յայտնեցի, ան կասկածանքով հարց տուաւ թէ արդեօք ձեռքս պիտի երթա՞ր զայն գրելու: Ինչպէս կը տեսնէք՝ գնաց: Գնաց, որովհետեւ խորն է ցաւը, ի տես այն հիասթափ վիճակին, որ կ՛ապրինք ազգովին: Գնաց, որովհետեւ մեր անփոյթ աչքերուն առջեւ մեր անկախութիւնը տակաւ կը հիւծուի: Գնաց, որովհետեւ գալիք հաւանական աղէտի սպառնալիքը եւ զայն կանխելու անհրաժեշտութիւնը պարտաւորեցուց զայն:

Յուլիս ամսուն, երկու շաբաթով այցելեցինք պատմական Հայաստանի ու Կիլիկիոյ զանազան շրջանները: Զգացական ու խորհրդածական ալեկոծումներու շարան մը ապրեցանք, որոնք յաճախ գիրար կը հակասէին: Կորսուած հողերու զգացմունքային վիշտը բախեցաւ կորուստի պատասխանատուներու փնտռտուքին հետ: Ապրուած ցաւը բախեցաւ անոր առաջքը առնելու, զայն կանխելու անփութութեան հետ: Լքուած ապարանքներու եւ աւերուած աղքատիկ տուներու տխուր պատկերը եկաւ հաստատելու այն չոր իրականութիւնը, որ աղէտը կը տանի հարուստն ու աղքատը, երբ անոնց կը պակսի հասարակաց ճակատագրի ենթակայ ըլլալու եւ հետեւաբար հաւաքական ուժ դառնալու գիտակցութիւնը:

Հասարակաց ճակատագրի եւ հաւաքական ուժի գիտակցութիւն: Ասոնք անհրաժեշտ հիմնաքարեր են որեւէ անկախ պետականութեան կերտման: Երբ ակնարկ մը կը նետենք Թուրքիոյ Հանրապետութեան եւ Հայաստանի Ա եւ Գ Հանրապետութեանց ստեղծման նպաստող իրադարձութեանց վրայ, բացայայտ կը դառնայ թէ ի՞նչպէս Համաշխարհային Ա պատերազմին ջախջախուած Օսմանեան Կայսրութիւնէն ծնաւ յաղթական Թուրքիան, մինչ Յաղթական Դաշնակիցներու «փոքր դաշնակից» Հայաստանը վրայ տուաւ իր նորակերտ անկախութիւնը եւ Արցախեան ազատամարտ կերտած ներկայ Հայաստանին մնացած է միայն անուանական անկախութիւն մը: Թէ ի՞նչպէս հակառակ սկզբնական անյաջողութեանց եւ օտար մեծ ու փոքր պետութեանց բանակներուն ենթակայ ըլլալով հանդերձ, Մուսթաֆա Քեմալ մը կրցաւ իր շուրջ համախմբել ժողովուրդը եւ ազատագրական պայքար մղելով բոլորին դուրս շպրտել, մինչ մենք հակառակ ռազմի, պարէնի, դիրքի եւ այլ առաւելութեանց, առանց փամփուշտ արձակելու անառիկ Կարսի բերդաքաղաքը եւ այլ հողեր յանձնեցինք թշնամիին: Թէ ի՞նչպէս Յաղթական Դաշնակիցներու ենթակայ եւ անոնց կողմէ հրահրուող Սուլթանի պատուիրակութիւնը գիտակցեցաւ զիջիլ իր ներկայացուցչութիւնը յօգուտ Քեմալի ազգային պատուիրակութեան, որ մէկ ճակատով ազդեցիկ ներկայութիւն ունենան բանակցութեանց սեղանին, մինչ մենք զոյգ պատուիրակութիւններով ու չհամակարգուած ծրագրով ներկայացանք: Թէ ի՞նչպէս Քեմալ յաջողեցաւ երկրին այբուբենը հիմնովին փոխելով, նոր ուղղութիւն տալ երկրին ու ապագայ սերունդներուն, մինչ մենք օտարի ազդեցութեան տակ, երկճիւղեցինք մեր դարաւոր ուղղագրութիւնը, իսկ անկախութեան վերատիրացումէն ետք ալ, զանազան պատճառաբանութիւններ առաջ քաշելով չի կրցանք գէթ միասնականացնել զայն: Թէ ի՞նչպէս Եւրոպայի «հիւանդ մարդը» նկատուող Օսմանցի Թուրքը, դարձած է աշխարհի 17րդ ամենահարուստ պետութիւնը, մինչ Հայաստանը կը գտնուի աղքատ պետութիւններու շարքին: Թէ ի՞նչպէս անկախ Թուրքիան իր 13 միլիոն բնակչութիւնը բազմացուց 77 միլիոնի, մինչ անկախ Հայաստանի բնակչութեան կէսը լքեց երկիրը:

Հարկ կա՞յ նշելու, որ երբ երկրի մը առաջնորդը խաբեբայութեամբ տիրացած է այդ պաշտօնին ու հետեւաբար չունի ժողովուրդի թիկունքը ու չի վայելեր անոր վստահութիւնը, այդ երկիրը խոցելի կը դառնայ օտարի շահատակութեանց ու չի կրնար յառաջդիմել: «Մասիս»ի Յունուար 2, 1999 թիւով հրատարակած էինք յօդուած մը՝ «Կը Փնտռուի Առաջնորդ» խորագրով, կարեւորելով յստակատեսիլ առաջնորդի դերը ազգի մը յառաջխաղացքին մէջ: Հոն կը նշէինք, թէ «Այսօր, յոյժ կարիքը կը զգանք առաջնորդներու, որոնք գիտակից են իրենց առաքելութեանց՝ որպէս պահապանը մեր ազգի աւանդութեանց եւ իտէալներուն, փայփայիչը անոր յոյսերուն եւ խթանիչը անոր հաւատքին, մտքի ու բազկի ուժին: Առաջնորդը գլխաւոր դեր կը խաղայ ժողովուրդի հոգեվիճակի աշխուժութեան մէջ: Ան տեսիլք ունեցող մարդ է եւ պարտի ժողովուրդը առաջնորդել այդ տեսիլքի ճամբով»: Դժբախտաբար տասնըհինգ տարիներ առաջ հնչեցուած այդ փնտռտուքը տակաւին կը շարունակուի ու վեհ տեսլական ունեցող արժանի առաջնորդի մը բացակայութեան պատճառաւ Հայաստանի վայրէջքն ալ կը շարունակուի:

Վայրէջքի մէջ ենք, որովհետեւ փոխանակ հաւաքական ուժի գիտակցութիւնը սնուցանելու, բաժանարար գիծեր կը ստեղծենք հատուածական փառամոլութեանց գոհացում տալու: Վայրէջքի մէջ ենք, որովհետեւ անհատական եսասիրութիւնն ու փառասիրութիւնը «տղամարդկութեան» չափանիշ դարձուցած ենք, ոտնակոխելով «մենք»ի արժանիքները: Վայրէջքի մէջ ենք, որովհետեւ անմիջական ու առտնին շահերը կը գերադասենք հեռակայ մնայուն ու գերագոյն շահերէն: Վայրէջքի մէջ ենք, որովհետեւ փոխանակ պատասխանատուութիւն վերցնելու մեր սխալներուն համար ու սրբագրելու զանոնք, օտարը կ՛այպանենք մեր բացթողումներուն համար, Լենինէն ու Քեմալէն, բոլշեւիկեան մուրճէն եւ թրքական սալէն, Գերմանիայէն, Ֆրանսայէն, Անգլիայէն մինչեւ Պուտին ու Էրտողան, Մաքսային Միութիւն եւ շրջափակում, Եւրոմիութիւն, Ատլանտեան Ուխտ, եւայլն, եւայլն:

Բայց ո՞ւր է ՄԵՐ պատասխանատուութիւնը այս բոլորին մէջ: Ի՞նչ արդարացում կարելի է գտնել, երբ քանի մը ամիրաներու եւ աղաներու շահերը կը խեղդեն գաւառներէն աղաղակող տառապող ժողովուրդի ճիչը. երբ քանի մը երեսփոխանական աթոռներու տիրացման տենչը կը շիջեցնէ Ատանայի կոտորածի կրակն ու գալիք նման աղէտներու առաջքը առնելու զգաստութիւնը. երբ կուսակցական մոլեռանդութիւնը կը պառակտէ Հայաստանեայց եկեղեցին ու կը տանի եղբայրասպան կռիւներու. երբ ոսկիի ընչաքաղցութիւնը ագահ օլիկարխներուն, կը տանի թունաւորելու երկրի ընդերքը եւ սպառնալու ապագայ սերունդներու առողջութեան: Ի՞նչու համար կը հանդուրժենք իշխանութիւնը առաջնորդներու, որոնք պարզապէս գործիքներ են օտարի ձեռքին ու վնասակար՝ մեր ազգային շահերուն: Չէ՛ որ իրականութիւն է, որ ամէն մէկ ժողովուրդ իր ապագան կը կ՛երտէ իր իտէալներու պատկերացումով: Ուրեմն ասո՞նք են մեր իտէալները: Բռնանալ սեպհական ժողովուրդի վրայ, ստորադասել զայն, անտեսել ազգային արժէքները, անձնական շահի համար կողոպտել երկրի եւ ապագայ սերունդներու հարստութիւնը: Դժբախտաբար այս է մեր նորօրեայ իրականութիւնը, զոր պէտք է հասկնալ ու ... ընդվզիլ:

Հարիւրամեակ մը առաջ, մենք «վերէն» կը նայէինք Թուրքին, որպէս անկէ աւելի բարձր մշակոյթի ու քաղաքակրթութեան տէր ազգ: Այսօր դժբախտաբար դերերը շրջուած են: Իրենք յառաջացան, իսկ մենք նահանջեցինք: Միջին Ասիայի տափաստաններէն եկած վաչկատուն եւ բարբարոս Թուրքերը ունեցան իրենց առաջնորդ «Աթաթիւրքը», այսինքն՝ Թուրքերու հայրը: Քաղաքակրթութեան օրրանի յաւակնորդ հայերս տակաւին կը սպասենք մեր առաջնորդ «հօր»:

**www.massispost.com**
**daily news updates**



# ՄԵՐ ԱՆԳԵՐԱԴԱՍ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

***ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ***

*Երկու հազարամեակներու վրայ երկարող մեր բաժան ու դաժան մութ անցեալէն ետք, կարելի է անվարան ըսել թէ մեր ներկան՝ եթէ ոչ ընկերային, գէթ ազգային եւ քաղաքական նուաճումներու տեսանկիւնէն դիտուած, աննախընթաց է հայոց պատմութեան մէջ: Մեծն Տիգրանի աշխարհակալ կայսրութեան օրերուն իսկ չենք ունեցած հայախօս, հայաբոյր ու հայազգաց պետութիւն մը ինչպէս մեր ներկայ ազգային պետութիւնը:*

*Մեր նորանկախ պետականութեան տարեդարձը մեզ կը դնէ տօնական օրուայ ուրախ ու զուարթ ըլլալու եւ զուարճանալու մթնոլորտին մէջ եւ մոռցնել կու տայ պահ մը բացասական պատկերները հայրենի մեր ժողովուրդի վայն ու ցաւն անտեսող պատասխանատուներուն:*

*Ցնծութեան պահին եւ մթնոլորտին մէջ այս կ՛ուզենք նախ եւ առաջ երկիւղածութեամբ եւ անսահման յարգանքով ծունկի գալ յիշատակին առջեւ բոլոր անոնց որոնք «Մահն իմացեալ անմահութիւն է» հաւատքով մեռան կախաղաններու վրայ կամ մեռան զէն ի ձեռին հայրենի լեռներու եւ դաշտերու մէջ, որպէսզի հայը ունենայ իր դարաւոր սեփական հողին եւ հայրենիքին վրայ՝ ազատ ու անկախ հանրապետութիւնն Հայաստանի:*

*Ցնծութեան պահին եւ մթնոլորտին մէջ այս հազար համբոյր ճակտին բոլոր անոնց, որոնք որպէս անծանօթ գործիչ կամ զինուոր պահեցին ու պահպանեցին, շինեցին ու կերտեցին, եւ իրենց արիւնով ու քրտինքով շաղախեցին, այն ամէն ինչը որուն հիմերուն վրայ կանգնեցաւ այս նորանկախ մեր երրորդ հանրապետութիւնը:*

*Ցնծութեան պահին եւ մթնոլորտին մէջ այս կ՛ուզենք Հայկական Ցեղասպանութեան Հարիւրամեակի սեմին, երդումով հանդէս գալ յիշատակին առջեւ մեր մէկուկէս միլիոն նահատակ նախնեաց ըսելու համար որ վճռած ենք շարունակելու մեր պայքարը, անզիջող երկաթեայ կամքով եւ անվերջ աշխատանքով, մինչեւ որ արդարութեան եւ հատուցման մեր յաղթանակով ձեր ոսկորները հանգչին եւ ոգիները խաղաղին:*



*Անգերադաս արժէք եւ իմաստ ունի Հայաստանի մեր ներկայ երրորդ հանրապետութեան անկախութիւնը: Տագնապած աշխարհ մը կայ այսօր մեր հայրենիքի շուրջ եւ նորօրեայ պաղ պատերազմի մը զոհ դառնալու վիճակուած են փոքր երկիրները այդ տագնապած աշխարհի սահմաններէն ներս: Համախմբուածութեան պէտքն ու կարիքը կայ այսօր մեր ժողովուրդի ամէն քաղաքական հոսանքներն եւ կողմերը իրար մօտ կանգնեցնելու եւ միասին գործելու որպէսզի մեր անկախութիւնը չվտանգուի: Պետական իմաստուն ղեկավարութիւն է պէտք որ գիտնայ ժողովուրդին հետ եւ ժողովուրդին համար աշխատանք տանիլ որպէսզի պետութիւն-ժողովուրդ գործակցութեամբ ամէն տեսակի դաւադրութիւն ձախողութեան մատնուի: Թող մեր նախագահը եւ իր զօրակից շրջապատը (Entourage) ժողովուրդի շարքերուն մէջ ըլլան եւ անոր հետ կանգնած դիտեն խղճալի վիճակը հայրենի տնտեսութեան եւ արտագաղթին եւ իրենց դասակարգի շահերէն մեկնած «սխալը ճիշդ որպէս» բացատրութիւններ չտան:*

*Վերստին մենք զմեզ դնելով տօնական օրերու ուրախ ու զուարթ ըլլալու մթնոլորտին մէջ, հեռուէն եւ սփիւռքի այս հեռաւոր մէկ անկիւնէն խանդավառութեամբ կ՛ողջունենք հայրենի մեր ժողովուրդը իր անկախութեան տօնին առթիւ, մաղթելով որ ազատ ու անկախ հայրենիքի կողքին ան ունենայ ընկերային ծառայութիւններով օժտուած վարչաձեւ մը, որպէսզի անոր միջոցաւ կատարուի եւ կիրարկուի արդար բաժանում ազգային հարստութեան:*

*Երէկ էր տակաւին երբ հայութիւնը ամենուրեք տօնեց Արցախի ազատագրման եւ անկախութեան ողջունելի տարեդարձը: Թող որ անկախ Հայաստանով անկախացած հերոս մեր Արցախը երբեք ցաւ ու վիշտ չճանչնայ, եւ իր հերոսամարտեր մղած քաջ ժողովուրդը միշտ վեր պահէ իրմով վեր պահուած մեր ազգային արժանապատուութիւնը:*

*Եւ վերջապէս, ողջո՜յն մեր հայրենի ազգային բանակին որուն առջեւ ամէն հայ սիրով կը խոնարհի եւ որուն համբաւով ամէն հայ հպարտութեամբ կը լեցուի եւ որուն յաղթական երթին ու տողանցքին ի տես ամէն հայու աչք ուրախութեան արցունքներով կը պղտորի:*

*Բարեփոխուած փոփոխութեամբ կարելի է հոս կրկնել:*

*Վերականգնած ազատ աշխարհ Հայաստան,*

*Բազում դարեր դաժան ճամբայ դու անցար,*

*Քաջ նախնիք մեր մաքառեցին քեզ համար,*

*Որ դառնաս դու մայր հայրենիք հայութեան:*

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

# ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ ԻԴԵԱԼՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

***Ռ. ԿՈՐԻՒՆ***

*Մայր Հայաստանի անկախութիւնը Երկունքով ծնուեց, խանձարուրուեց աչքերը փակ, ականջները անլուր, մարմինը ձիգ, մանկական սիրտն էր բաբախում հազիւ լսող՝ թոյլ ու նուազ: Մեր ժողովուրդը երկա՜ր տարիներ սպասում էր նրա ծննդեան՝ անցեալի մաքառումների արդիւնքով սաղմնաւորուած պահանջով՝ ցոյցերով, բողոքներով եւ զոհեր նուիրաբերելով: Ազգի ժողովների տանը, ազգի պարագլուխների կողմից, միահամուռ ու միակամ հռչակուեց անկախութեան ծննդեան թուականը, որն էր՝ 1991 թիւ, Սեպտեմբերի 21, ոնց անում է պատասխանատու բժիշկը մատեանի մէջ դրոշմելով եւ կնքելով երեխայի աշխարհամուտը: Անկախութեան ծարաւ Մայր Հայաստանի զաւակները բոլոր թէ՛ երկրում եւ թէ՛ արտերկրում հանդիսութիւններով ու միջոցառումներով բարձրաձայնեցին յանուր աշխարհի Ծնունդը Հայաստանի Անկախութեան եւ այսպիսով հիմք դրուեց երրորդ հանրապետութեան, ծածանուեց եռագոյնը՝ կարմիր, կապոյտ, նարնջագոյն յուրախութիւն ողջ հայութեան:*

3 Nights Cruise on

Carnival Inspiration

Departure to Ensenada Mexico

October 10 to October 13

2014





ITINERARY

| DAY | DATE | PORT | ARRIVE | DEPART |
|---|---|---|---|---|
| Fri | Oct 10 | Los Angeles ( Long Beach) ,CA | | 5:30 pm |
| Sat | Oct 11 | Ensenada Mexico | 9:00am | 6:00 pm |
| Sun | Oct 12 | At sea | | |
| Mon | Oct 13 | Los Angeles (Long Beach) , CA | 8:00am | |

Hurry Make your reservation by calling

Vacations to Go

Mr Ferris 1(800) 514-9986 Ext #7020 From 7:00 am to 4:00 pm Monday to Friday

Ask for K.N.B Cruise Deal #27824 $199.00 and up and $179.00 for ages 55 plus

Per person based on double occupancy

Cancellation Insurance is strongly recommended at the time of reservation

For more information call

Alice Keshishian------------------------------ (323)722-7465

Arto Sevajian-------------------------------(818)956-6162

Vania Vartzbedian/Gordian -------------(818) 731-5456



ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ

ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

ՊԱՏՇԱՃ ՅԱՅՏԱԳԻՐ



ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՊԸՐՊԷՆՔԻ

ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

3325 N Glenoaks Blvd., Burbank, CA 91504

ՈՒՐԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 3-ԻՆ, 2014

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:30-ԻՆ

ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԻՆ ՀՈԳԵՃԱՇ

ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑՈՒԻ ԳԱԼԱՅՃԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ



# ՄԵՐՏԻՆԵԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏԸ



«Մենք մանուկներ՝ հայոց ազգին, Ծագող լոյսին հետ առտուան, Միշտ կենսուրախ եւ ժպտագին, Կ՚երթանք դպրոց շարան - շարան»:

Իսկապէս, Երկուշաբթի Օգոստոս 18, 2014ի առաւօտուն, ոչ միայն հայ մանուկներ ու պատանիներ, այլ նաեւ հայրեր ու մայրեր, «ուրախ ու ժպտագին», եկած էին Մերտինեան Վարժարան՝ «Հայ Դպրոց»: Ճիշդ ժամը ութին հնչեց տարուան առաջին դպրոցական զանգը, եւ դասարան առ դասարան, «շարան 6 շարան», Ծաղիկէն մինչեւ Ը. կարգերու աշակերտները, իրենց դաստիարակ ուսուցիչներու առաջնորդութեամբ եւ հետեւողութեամբ ծնողներու, ուղղուեցան դէպի վարժարանի ամբողջովին վերանորոգուած սրահը, ուր տեղի ունեցաւ 2014-2015 տարեշրջանի վերամուտի բացման հանդիսութիւնը: Ծնողներու դէմքերը կը ճառագայթէին ժպիտով եւ հպարտութեամբ: Ոմանք յուզուած էին, իրենց հոգեհատորներէն պիտի բաժնուէին ... քանի մը ժամով... մինչդեռ աշակերտները կ՚եռային իրենց աթոռներուն վրայ նստած, անհամբեր՝ լսելու իւրաքանչիւրը քովինին ամառնային արձակուրդին մասին:

Ամերիկեան եւ հայկական քայլերգներու երգեցողութենէն ետք, Վեր. Արա Զագըրեանը առաջնորդեց տարուան առաջին պաշտամունքի պահը եւ տուաւ իր պատգամը: Ան Աստուածաշունչի մէջբերումներով հիմնաւորեց իր խօսքը, թելադրելով բոլորին՝ աշակերտներուն, ուսուցիչներուն եւ ծնողաց «նոր» մտքով, մտածելակերպով եւ մանաւանդ ամենայն կամեցողութեամբ սկսիլ «նոր» տարեշրջանը, որպէսզի հաստատուն քայլերով յառաջանան իրենց դիմաց բացուած ուղիէն:

Պատուելիէն ետք բեմ բարձրացաւ Տիկ. Լենա Էքմէքճեանը՝ վարժարանի կրօնի բաժանմունքի պատասխանատուն, որ 23րդ Սաղմոսը արտասանել տուաւ աշակերտներուն եւ առաջնորդեց գանոնք Տէրը փառաբանող երգեր երգել տալով, դաշնակի ընկերակցութեամբ երաժշտութեան նոր ուսուցչուհի Տիկ. Ալիս Տէր Գէորգեանի:

Ապա ելոյթ ունեցաւ վարժարանի կենտրոնակ տնօրէնուհին՝ Տիկ. Լինա Արսլանեանը: Ան բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն, փառք տուաւ Ամենակալ Հայր Աստուծոյ՝ Մերտինեան վարժարանին ուսումնական նոր տարի մը եւս շնորհելուն համար եւ շնորհակալութիւն յայտնեց վարժարանի պատկան մարմիններուն, որոնք ոչ մէկ ճիգ չեն խնայեր հաստատութիւնը ամուր հիմերու վրայ պահելու եւ անոր հեզասահ ընթացքը ապահովելու համար: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ ամառնային դպրոց եկող աշակերտներուն, ծնողաց եւ մանաւանդ ուսուցիչներուն, որոնք լրիւ 5 շաբաթներ ապրեցան կենսուրախ եւ դաստիարակիչ մթնոլորտի մը մէջ:

Տիկ. Արսլանեանը մատնանշեց յատկապէս, որ նոր տարեշրջանը կը սկսինք ուրախալի երեւոյթով մը՝ վարժարանիս Նախամանկապարտէզը պետական արտօնագրով մինչեւ հիմա կրնար ընդունիլ միայն 36 աշակերտ. շնորհիւ աւելցուած դասարանի մը եւ կատարուած բարենորոգումներու, այժմ արտօնութիւն ստացած ենք ընդունելու 48 աշակերտ եւ շուտով այդ թիւը պիտի բարձրանայ 57ի: Տիկ. Արսլանեան յիշեցուց նաեւ, որ տարուան առաջին ծնողական ժողովը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 5ին, թելադրեց բոլորին ներկայ գտնուիլ եւ մասնակցիլ այդ հանդիպման ընթացքին տեղի ունենալիք Ծնողա-Ուսուցչական կազմի նոր վարչութեան ընտրութեան:

Հուսկ ապա, ան ներկայացուց այս տարեշրջանի ուսուցչակազմի, ինչպէս նաեւ պաշտօնէութեան իւրաքանչիւր անդամը եւ բոլորին մաղթեց բարի եւ արդիւնաւէտ տարի մը: Հանդիսութիւնը վերջ գտաւ Վեր. Զագըրեանի օրհնութեան աղօթքով եւ Տէրունական Աղօթքի երգեցողութեամբ, որմէ ետք աշակերտները անցան իրենց դասարանները:

Մերտինեանի Նախամանկապարտէզի վերամուտը տեղի ունեցաւ նոյն օրը, առաւօտեան ժամը 10:00ին:

Հանդիսութիւնը սկսաւ Տիկ. Լենա Էքմէքճեանի աղօթքով, որմէ ետք խօսք առաւ տնօրէնուհին՝ Տիկ. Լինա Արսլանեանը. ան բարի գալուստ մաղթեց բոլորին, ներկաներուն տեղեկացուց

Նախամանկապարտէզի պետական նոր արտօնագրի մասին՝ որ իրաւունք կու տայ 36ի փոխարէն ընդունիլ 48 աշակերտ. կը սպասուի որ այդ թիւը շուտով բարձրանայ 57ի. ապա շեշտեց Նախամանկապարտէզի կարեւորութիւնը «Կակուղ Թաթիկներ»ու կեանքին մէջ, ուր անոնք կը ստանան անսահման սէր ու գորով, կը սորվին լսել, խօսիլ, երգել ու պարել՝ դրական եւ ջերմ մթնոլորտի մը մէջ: Ապա ան

Շար.ը էջ 19

# ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ 35ՐԴ ՎԵՐԱՄՈՒՏԸ



Սահակ-Մեսրոպ Վարժարանի 35րդ վերամուտը սկսաւ 14 Օգոստոս 2014ի առաւօտեան:

Մեծ թիւով ծնողներու ներկայութիւնը ակներեւ էր, որոնք իրենց զաւակներուն հետ ուրախ տրամադրութեամբ լեցուցած էին դպրոցիս շրջափակը:

Աշակերտներ իրենց ընկերներուն հետ սիրալիր կը զրուցէին իրենց ամառուան արձակուրդին մասին:

Զգալի էր իրենց աչքերուն փայլքէն, դպրոցին կարօտը: Կարծես յոգնած էին արձակուրդէն եւ դարձեալ կ՚ուզէին դպրոց յաճախել, աշխատիլ եւ նոր գիտութիւն ամբարել:

Ահաւասիկ հնչեց դպրոցական առաջին զանգը: Աշակերտներ դասարանային շարքով մանկապարտէզէն մինչեւ 8րդ դասարան շարուեցան, դիմաւորելու իրենց ուսուցիչները:

Դպրոցիս տնօրէն՝ Պրն. Յովսէփ Ինճէճիքեան ողջունեց բոլոր ներկայ աշակերտութիւնը, ծնողները, հոգաբարձուները, ուսուցիչները եւ դպրոցիս բարեկամները: Ան բարեգալուստ մաղթեց եւ իր գոհունակութիւնը յայտնեց, որ դպրոցս աշխոյժ մթնոլորտի մէջ վերագտած է իր նախկին տարիներու աշակերտութեան թիւը, որ ոգեւորիչ եւ խրախուսիչ է բոլորիս համար, փառք տալով որ հակառակ բազմաթիւ դժուարութիւններու, կանգուն մնացած է 35 բեղուն տարիներ: Ան վստահեցուց նաեւ, որ նոյն թափով պիտի շարունակէ գոյատեւել դաստիարակելու համար նոր սերունդներ:

Առաջին առիթով, Տիկ. Պատալեան ներկաները առաջնորդեց Ամերիկեան եւ Հայկական ուխտերը կատարելու, ապա արտասանուեցաւ «Հայր Մեր»ը եւ երգուեցաւ հայկական քայլերգը, որմէ ետք Տիկ. Ապաճեանի առաջնորդութեամբ երգեցին «Օրհնէ Տէր»ը:

Վեր. Վաչէ Էքմէքճեանի աղօթքով բացուած յայտարարուեցաւ 2014-2015 դպրոցական տարեշրջանի վերամուտը, հաւատալով, որ Սահակ-Մեսրոպ Վարժարանի աշակերտութիւնը պիտի ստանայ բարձր ուսում եւ հայեցի ու կրօնական դաստիարակութիւն:

Հոգաբարձութեան Թարգմանը հանդիսացաւ Վահագ Ակօճեան, որ իր կարգին ուրախութեամբ դիմաւորեց ներկաները եւ յայտնեց հոգաբարձական կազմին պատրաստակամ կեցուածքը,որ միշտ պատրաստ է իր ներդրումը ընծայելու բարոյապէս եւ նիւթապէս օժանդակելու մեր սիրասուն փոքրիկներուն, որպէս մեր ապագայի առաջնորդները եւ տիպար հայ քրիստոնեաները:

Վերամուտի բացման արարողութեան փակումը կատարեց Տէր Պօղոս Քհնյ. Պալթայեան, որ իր գոհունակութիւնը յայտնեց իր ներկայութեան համար եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց Տնօրէնութեան, Ուսուցչակազմին եւ գոհողութիւն ստանձնած ծնողներուն: Այսպիսով պահպանիչով այս բաժինը աւարտեցաւ:

Ապա աշակերտները իրենց ուսուցիչներու առաջնորդութեամբ, եւ ամենայն կարգապահութեամբ տեղաւորուեցան իրենց դասարանները, դիմաւորելու նոր ուսումնական տարեշրջան մը նոր յոյսերով եւ երազներով, հասնելու համար լաւագոյնին եւ զարգացնելու իրենց միտքերն ու հոգիները Սահակ-Մեսրոպի հովանիին ներքեւ, դառնալու հպարտ հայորդիներ, ծառայելու իրենց ազգին, եկեղեցիին եւ հայրենիքին:

Սօնա Պատալեան

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 100,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.
Name: ----------------------------------------
Address: ----------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :---------------------- Fax : -------------------------

# ՊՈՂՊԱՏԻ ՊԷՍ ՍԷՐ, ՈՉ ԹԷ ՀՐԱԲՈՒԽԻ ՊԷՍ ԺԱՅԹՔԵԼ ԵՒ ՀԱՆԳՉԵԼ

*Ռ. ԿՈՐԻՒՆԻ*
*(Շարունակուած նախորդ թիւէն)*

*Կողքիս պրն. Ցակոբը ոգեւորուած ձայնեց.*

*-Ապրես դու երիտասարդ, էս ինչ գեղեցիկ բնորոշեցիր հայ ընտանիքի առաքելութիւնը, շատ ապրե՛ս:*

*Բոլորիս կողմից յատուկ կենաց խմուեց տան տիկնոջ՝ տիկ. Սիրանուշին գնահատելով ճաշակով սեղան եւ համեղ կերակուրներ պատրաստելու համար: Ջուարթահայեաց տիկ. Սիրանուշը ոգեւորուած էր երեւում իմ ներկայութեամբ եւ ընտանիքի կազմի միատեղ սեղանը բոլորած լինելով: Նա շատ յարմար զոյգ էր երեւում ամուսնուն իր համաչափ հասակով:*

*Ընթրիքը աւարտուեց, տեղափոխուեցինք բազկաթոռների վրայ, նկատելով Արցախում շարունակւող կռիւները, հայ ընտանիքներում կամ հայ շրջանակներում անկարելի էր կռիւների մասին չխօսուէր, ամէն հայի տանը Արցախն էր ու Հայաստանը, ուրախանում էին, տխրում էին, երբ բեկորներ էին խլւում մեր սրտերից եւ հպարտանում էին ազատամարտիկների յաջողութիւններով, այդու կարեւոր խօսակցութիւն սկսուեց Արցախի ազատագրական կռիւների շուրջ, բոլորի արիւնը եռում էր սպասելով քաջ ու անվեհեր ազատամարտիկների վերջնական յաղթանակին: Առաջինը եղաւ պրն. Ցակոբը՝ հին սերունդի ներկայացուցիչ, կեանքի տաքն ու պաղը ճաշակած եւ Թուրքերի արիւնահեղութիւններից աւելի տեղեակ անձ:*

*-Թուրքերն ինչեր ասես, որ չեն արել մեր ժողովրդի գլխին, թէ՛ 1915-ից առաջ, եւ թէ՛ 1915-ին եւ յետոյ: Մէկ ու կէս միլիոն մեր ժողովրդի կոտորածը, հայրենիքի բռնագրաւումը, Նախիջեւանի կոտորածը, Արցախն էլ ուզեցին այդպէս անել, բայց չյաջողեցին, քանի որ հայերը գիտակցեցին իրենց ուժով միայն կայ փրկութիւն ոչ թէ սրանից նրանից կախուած մնալով, ուրիշները միշտ մեզ շահագործել են եւ զգոյշ պիտի լինենք ուրիշների խաղաքարտը չդառնալու համար:*

*Պրն. Ցակոբի ամփոփ բանաձեւումը Թուրքերի վերաբերեալ սպառիչ գտայ: Էդ րոպէին նրա աւագ տղան՝ Վարդանը արտայայտուեց.*

*-Արցախի պաշտպանութիւնը բոլորիս պարտականութեան մէջ է մտնում, ով ինչ ձեւով կարող է թող օգնի, նկատելով որ քանակով քիչ ենք եւ կարիք է նաեւ աղջիկների անվերապահ մասնակցութիւնը, եթէ Հայաստանը հայ ժողովրդի աջ ձեռքն է, Արցախն էլ ձախ ձեռքն է, երկու թեւեր ճախրելու համար:*

*Հերթական կարծիքներ հնչեցին՝*

*-Դեռ կռիւները շարունակւում են, փառք ու պատիւ մեր ազատամարտիկներին նրանք մեծ հերոսութիւն են ցուցաբերում, մահու եւ կենաց կռիւ է գնում, մերոնք քիչ եւ նախնական զէնքերով, իսկ թշնամին մինչեւ ատամները զինուած այլ իսլամական երկրների վարձկան-կամաւորների օգնութեամբ, նոյնիսկ բոլոր ճակատներում էլ թշնամին տանուլ է տալիս, Անդրանիկն էր:*

*Ուշադրութիւնս լարուեց, երբ Աստղիկը խօսել սկսեց.*

*-Ուրախալի է, որ մեր հայաստանաբնակ, արցախաբնակ եւ սփիւռքաբնակ ժողովուրդը մէկ մարդու պէս ոտքի է կանգնել իր պապենական Արցախը ազատագրելու եւ թշնամուն ապացուցելու, որ միակամ ու միասնական հայութիւնը իր պահանջներից նահանջողը չի: Սովետի ժամանակ Թուրք հեղինակաւորները Կրեմլինի մօտ բամբասանքներով ու սադրանքներով յաջողել էին Արցախը պահել իրենց իշխանութեան տակ եւ որեւէ ազգային շարժում կամ պահանջ խեղդում էին ստալինեան անձերի օգնութեամբ: Հայոց պետականութիւնը նոր է ծնունդ առել, դեռ երկար ճամբայ ունի կտրելիք, յուսով այս միասնականութիւնը ընդմիշտ գոյատեւի կուռ շարքերով դէպի յաղթութիւն եւ բարւոք կեանք:*

*Հիացած էի նրա մտածումների վրայ, որքան տեղին, որքան պատմականօրէն եւ քաղաքականապէս ճշգրիտ բացատրութեամբ ներկայացրեց իր հայեացքը հակիրճ ու սեղմ: Այս նուրբ ու գեղատեսիլ աղջիկը ապացուցեց իր գիտելիքներով արժանաւոր հայուհի է հայութեան կեանքի իրադարձութիւններով հետաքրքրւող ու մտահոգւող: Նրա մօտեցումը հարցերին ինձ մօտ առաջացրեց յարգանք եւ համակրանք:*

*Գիշերը բաւական առաջացել էր, պրն. Ցակոբը դիմեց տղաներին ասելով.*

*-Վարդան եւ Անդրանիկ, դուք երկուսով Դերենիկին կը հասցնէք հանրակացարան, երբ միամտուեցիք, նա արդէն սենեակումն է, կը վերադառնաք, էս օրերին այնքան վստահելի չէ ատրպէյջանցիների ազատ մուտքի պատճառով քաղաք:*

*Անհուն շնորհակալութեամբ ձեռքեր սեղմեցի անմոռանալի հիւրասիրութեան համար եւ տղաների հետ դուրս եկանք փողոց:*

*Թաւրիզ քաղաքը քնի մէջ էր, մեքենան գնում էր աղօտ լուսաւորուած փողոցներով, ուր անդորրն էր տիրում, հասանք հանրակացարան, տղաներին բարի գիշեր ասելով բաժանուեցինք:*

*Վաղը ուրբաթ արձակ էր, դասերս թողեցի վաղուայ համար, արդէն ուշ կէս գիշերը անցել էր, պառկեցի քնելու, մարմնով յոգնած, բայց ուղեղս ջաղացի պէս բանում էր, Աստղիկն էր ողջ էութեամբ մտքիս ոգեւորիչը իր թողած խոր տպաւորութեամբ, այսպէս քաղցր ապրումների մէջ մարմին ու ուղեղ թմրած քուն էին մտել:*

*Հետզհետէ իմ շփում-յարաբերութիւնները Աստղիկենց տան հետ յաճախակի էր դառնում առաւելապէս նրա եղբայրների հետ, նրանց հօրից ժառանգած աւտօ նորոգման արհեստանոցը գնալով, իմ ներկայութիւնը հաճելի էր թէ իրենց եւ թէ իմ համար, իմ ճիւղին վերաբերւող արհեստ էր: Նրանք աշխատասէր եղբայրներ էին, հմուտ վարպետներ եւ վստահելի մարդիկ յաճախորդների մօտ:*

*Գրեթէ շաբաթուայ մի երկու գիշերը ընթրիքի հիւր էի լինում հաճոյքով հիւրասիրուելով: Առիթ էր լինում Աստղիկի հետ զրուցում էինք իր եւ իմ համալսարանական դասերի մասին, նա տարրալուծաբանի ճիւղն էր ուսանում, ի՜նչ զուգադիպութիւն, նոյն տարին ենք աւարտելու: Ընտանիքում ամենասիրուած անձն էր, եղբայրները ուսման մէջ յաջողութիւն չէին ունեցել՝ հետեւելով հօր արհեստին, Անուշը ընդունակ է եղել գտնուելով ընտանեկան կազմի հոգատար հսկողութեան տակ, արդէն դառնում էր համալսարանաւարտ մասնագիտանալով կարեւոր բնագաւառում:*

*Աւարտական քննութիւններով էինք ծանրաբեռնուած թէ ես եւ թէ Աստղիկը, այնպէս որ քիչ էի հանդիպում, պրն. Ցակոբը անհամբեր սպասում էր ինձ, դժուար էր տանում իմ բացակայութիւնը, հեռախօսով կապւում էր ասելով՝*

*-Ա՛յ տղայ, Դերենի՛կ, չկաս, աչքս ճանապարհիդ ա, որ գաս միասին ընթրենք, առանց քեզ հացը ջանիս չի նստում:*

*Նրա խօսքերում ծնողական գուրգուրանք եւ փայփայանք էի նկատում եւ փոխանակ պրն. Ցակոբ ասէի, հայրիկ է կոչում:*

*-Հայրի՛կ, քննութիւններով եմ զբաղուած, ինչպէս՝ Աստղիկը, ժամերը թանկ արժեն հիմա, կը գամ, հէնց վաղը գիշեր կը գամ, վստահ եղիր:*

*Փորձաքննութիւնները յաջողութեամբ աւարտել էի թեթեւացած ծանրաբեռնուածութիւնից՝ իմ այցելութիւնները յաճախակի էին դարձել պրն. Ցակոբենց տանը, սակայն աշխատում էի չխանգարել Աստղիկին, քանի որ նրանը դեռ ընթացքի մէջ էին:*

*Իմ բուհի յաջողած ուսանողներս սպասում էինք մեր ուսման գնահատման վկայականների բաշխման, օրը արդէն որոշուել էր, զանգեցի Թեհրան ծնողներիս.*

*-Պապ ջա՛ն, համալսարանս յաջողութեամբ աւարտել եմ, սպասում եմ վկայականս ստանամ, ուզում եմ դուք էլ էդ օրը էստեղ ներկայ լինէք:*

*-Դերենիկ բալա՛, մատաղ ըլլնեմ քեզ, էս ինչ մեծ եւ ուրախ լուր տուիր ինձ, հէնց հիմա մօրդ կ՛ասեմ, նաեւ մեծ պապին ու մեծ մամին էլ ետներս կը բերենք, նրանք շատ կ՛ուրախանան:*

*-Պապ ջա՛ն ամէնով եկէք, վաղն էլ ճանապարհուէք:*

*Աստղիկին տեղեկացնելու համար երեկոյեան գնացի իրենց տուն:*

*-Էս ինչ լաւ ես արել այ տղա՛յ, մի լաւ ախորժակով միասին կ՛ընթրենք, պրն Ցակոբն էր:*

*-Նախ ինձ ասէք Աստղիկն ո՞ւր է:*

*-Ըստ սովորականի դասերովն է սենեակում, տիկ. Սիրանուշն էր:*

*Նա լսելով իմ ձայնը սենեակից դուրս գալով մօտեցաւ.*

*-Ահաւասիկ Դերենիկ, ասելիք ունե՞ս:*

*-Բայց կը ներես, չեմ ուզում քեզ խանգարել, եկել եմ ձեզ հրաւիրելու իմ աւարտական վկայականի բաշխման օրուայ հանդիպման (Այն տարիներին յատուկ հանդէս չէր կազմակերպւում, պարզ-սովորական յանձնում էր տեղի ունենում):*

*-Էս ի՜նչ ուրախ լուր տուիր, սրտանց շնորհաւորում եմ, ե՞րբ է, կը գամ, լաւ դու պապայի եւ մամայի հետ խօսիր:*

*Արդէն նրանք էլ լսել էին:*

*-Այ տղա՛յ, Դերենի՛կ, բոլորս ենք գալու, ծնողներդ ինչպէ՞ս:*

*-Նրանք չորս հոգով են գալու՝ մեծ հայրս եւ մեծ մայրս էլ իրենց հետ:*

*-Ո՞ւր են մնալու:*

*-Հիւրանոց եմ տանելու:*

*-Նրանք ոչ մի տեղ չեն գնալու, կը գան մեր տուն, խօսքս քննարկման ենթակայ չէ:*

*-Շատ լաւ:*

*Տիկ. Սիրանուշի եւ պրն. Ցակոբի ուրախութիւնը կրկնապատկուեց: Սպասեցինք տղաներն եկան եւ միասին ընթրեցինք, գիշերն էլ չթողին գնամ հանրակացարան:*

*Հայրս իր սեփական մեքենայով հանրակացարանի առջեւում հանդիպեցինք, ծնողներս, պապիկս ու տատիկս մեքենայից իջան, արի ու տես, փողոցում ինչպէս են ինձ համբուրում ու գովում:*

*Ցետ միջօրէ էր, մերոնք գիտէին, ուր պիտի գնանք, նրանք եկել էին ծաղիկներով, քաղցրաւենիքներով եւ նուէրներով: Մեքենան ես քշեցի դէպի Աստղիկենց տունը:*

*Նրանք դռան առջեւում մեզ դիմաւորեցին: Խինդ ու ժպիտը անպակաս փայլատակում էր բոլորի հայեացքներին, անմիջական ծանօթութիւն տեղի ունեցաւ, պրն. Ցակոբը մեզ առաջնորդեց դէպի վերի յարկաբաժին:*

*Բարձր տրամադրութիւն էր տիրում ներկաների մօտ:*

*Մերոնք շնորհակալութեան եւ յարգանքի խօսքեր ասացին:*

*-Անհունապէս շնորհակալ ենք, որ մեր տղային էս քանի ժամանակներում հոգ էք տարել չտարբերելով ձեր զաւակների հետ, պապիկս էր:*

*Մայրս եւ տատիկս շատ ուրախ էին, զրուցում էին տիկ. Սիրանուշի եւ Աստղիկի հետ, Իրենց մօտենալով ասացի.*

*-Մամ ջա՛ն, թողէք Աստղիկին իր դասերով լինի, մէկ քննութիւն եւս ունի անցկացնելու:*

*Արդէն երեկոյ էր, Վարդանն ու Անդրանիկն էլ աշխատանքից եկան, միացան տնւորներին:*

*Մօրս եւ տիկ. Սիրանուշի միասնական օգնութեամբ ընթրիքի սեղանը պատրաստ էր:*

*Պրն. Ցակոբը առաջարկեց ես «Հայր Մերը» ասեմ:*

*-Սիրելի՛ բարեկամներ, բարի էք եկել, այս օջախը ձեզ է պատկանում, հանգիստ զգացէք, շնորհաւոր լինի Դերենիկի բարձրագոյն ուսման մագիստրոսի աստիճանին արժանանալու յաջողութիւնը, էլ աւելի բարձր տիտղոսների եւ նուաճումների մաղթանքով խմենք նրա կենացը, պրն. Ցակոբն էր:*

*Ջորս կողմից ուրախ կանչեր, բաժակների զարնուելու չխկչխկոցը իւրայատուկ նուագների սիմֆոնիա հնչեց՝ գնահատիչ, ոգեւորիչ, ուրախացուցիչ:*

*Այսպէս մի խումբ հայեր սրտերը վառ, երգն անպակաս, քէֆ էին անում սիրտ-սրտի տուած զաւակի յաջողութիւններով:*

*Վաղուան օրը երկու մեքենաներ, որոնց շարքին նաեւ Աստղիկը ծաղկեփունջերով ուղղուեցինք դէպի համալսարանի հանդիսասրահը, ես եւս ուսանողների դասի հետ արժանացանք գնահատանքի համալսարանի նախագահի կողմից դասախօսների ներկայութեամբ, իւրաքանչիւր շրջանաւարտ կրելով յատուկ տարազ ու գլխարկ ստանալով մագիստրոսի վկայական: Հայրս մօտեցաւ նախագահին եւ դասախօսներին նրանց ծաղիկներ նուիրեց եւ խորին շնորհակալութիւն յայտնեց երկրի սերունդների նկատմամբ իրենց ցուցաբերած ուսումնական հոգատարութեամբ:*

*Արարողակարգը աւարտուել էր, սակայն կեանքը նոր սկսւում էր շրջանաւարտներիս համար: Աստղիկը շնորհաւորանքի քաղցր ժպիտով ծաղկեփունջ նուիրեց ինձ (Իրանում հասարակական վայրերում յարմար չի նկատւում կին արմատի ձեռքսեղմումը եւ ողջագուրումը տղամարդու հետ ): Մերոնք բոլորը ուրախութեամբ ինձ գնահատեցին եւ շնորհաւորեցին:*

*Մօրս հետ առանձին զրոյցում.*

*-Դերենիկ ջա՛ն, կ՛ուզե՞ս, մե-*

*Շար.ը էջ 17*

# ՀԻՆԳ ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ԿԵԱՆՔԻ ՆՈՐ ՀԱՆԳՐՈՒԱՆ ՄԸ ՍԿՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Կեանքի ընթացքին գրեթէ ամէն բան ունի աւարտ: Երբեմն մենք մեր կամքով կը հրաժինք որոշ աշխատանքէ կամ յարաբերութենէ, իսկ այլ պարագաներու ստիպուած կ'ըլլանք դիմագրաւել անոնց աւարտը: Յաճախ մարդիկ համոզուած կ'ըլլան թէ երբ դուռ մը փակուի, անոր փոխարէն կը բացուի նոր դուռ մը՝ նոր ապագայ, նոր առիթներ: Սակայն, որպէս մարդ, բոլորս ալ մեր մէջ ունինք վախ մը նոր հանգրուան մը սկսելու նկատմամբ: Մարդը իր բնոյթով ապահով կը զգայ իր սովորական առօրեային մէջ, սակայն երբ բան մը փոփոխութեան ենթարկուի վախն ու մտահոգութիւնը կը սկսին մէջտեղ գալ: Փոփոխութիւնները անխուսափելի են, հետեւաբար պէտք է քայլ պահենք անոնց հետ եւ շրջանցենք անոնց պատճառած դժուարութիւնները:*

*Հետեւեալ հինգ խորհուրդները կրնան նպաստել փոփոխութեան դժուարութիւններու դէմ պայքարին եւ նոր հանգրուանի մը սկիզբ դնելու աշխատանքին:*

*1. Յարաբերութեան մը աւարտին, կեանքի հանգրուանի մը աւարտին կամ կորուստի պարագային բնական է, որ մարդիկ ունենան զղջումի զգացումներ: Զղջումը բնական զգացում մըն է, որ կրնայ շինիչ կամ կործանիչ ըլլալ: Լաւագոյն պարագային, զղջումը մեզի կ'օգնէ որ ապագային ճիշդ եւ մեզի յարմար որոշումներ առնենք, իսկ յոռեգոյն պարագային կրնայ մեզ քանդել եւ պատճառ դառնալ ընկճուածութեան կամ տխրութեան: Երկրորդ պարագային, զղջումը մեզ կը տատամսեցնէ եւ կը բարդացնէ նոր հանգրուան մը սկսելու աշխատանքը: Հետեւաբար, անհրաժեշտ է հասկնալ զղջումի զգացումը, ընդունիլ զայն եւ համոզուիլ որ այդ կրնայ դրական գործօն մը ըլլալ ապագայի ծրագիրներու որոշումներուն համար: Ի դէպ, զղջումի ծիրին մէջ կատարուած ուսումնասիրութիւնները ցոյց կու տան թէ մարդիկ իրենց ձախող որոշումներէն աւելի կը զղջան իրենց խուսափած ծրագիրներուն համար:*

*2. Անցեալի մտածումներու շարունակական շրջագիծէն դուրս ելլելը բաւական դժուար է: Յաճախ մեր մտքին մէջ կը մնան այն մտածումները, որոնք մեզի նեղութիւն կը պատճառեն եւ անոնցմէ ձերբազատուիլը անկարելի կը թուի մեզի: Կարեւոր է տեղեկանալ թէ առանձնութիւնը կը վատթարացնէ անհատի մը տառապանքը, հետեւաբար երբ պէտքը զգանք լաւ կ'ըլլայ որ մենք մեզ շրջապատենք դրական անհատներով:*

*Մտածումներու եւ մտահոգութիւններու սաստկութենէն դուրս ելլելու համար նաեւ օգտակար կ'ըլլայ օրուան ընթացքին նշանակել յատուկ ժամ եւ զայն յատկացնել մտածումներու կամ մտահոգութիւններու: Եթէ այդ ժամէն դուրս մեր մտքին մէջ արթննան մտածումներ՝ զանոնք ժխտելու փոխարէն կարելի է յետաձգել անոնց հետ զբաղելու աշխատանքը:*

*3. Մասնագէտները կը թելադրեն, որ նոր հանգրուանի մը սկիզբը պէտք է կեդրոնանալ միայն մեծ նպատակներու վրայ եւ խուսափիլ կազմակերպելէ անոնց ամէնէն փոքր մանրամասնութիւնները: Ժամանակի ընթացքին քայլ առ քայլ մանրամասնութիւնները կը յստականան:*

*4. Նպատակի իրականացման ճամբուն վրայ պէտք է ըլլալ ճկուն եւ ընդունիլ բոլոր այլընտրանքները: Թէեւ նպատակին կառչած մնալը կարեւոր է, սակայն անոր հասնելու միջոցները կրնան փոփոխութեան ենթարկուիլ: Այս պարագային պէտք է շարունակել նոյն ջանքերով եւ յոյսով:*

*5. Անպայման մեր կողքին պիտի գտնուին քաջալերող անձեր, որոնք իրենց դրականութեամբ կրնան շատ օգտակար դառնալ մեզի թէ՛ հոգեպէս եւ թէ՛ գործնական գետնի վրայ: Սակայն ամէնէն շատ կարեւոր է, որ մենք մեզ կարենանք քաջալերել եւ վերականգնել մեր կորովը՝ նոյն հետաքրքրութեամբ եւ հաճոյքով շարունակելու մեր ծրագիրները:*

# ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԾՆԵՐՈՒ ՀԵՏԵՒԱՆՔԸ ՓՈՔՐԵՐՈՒՆ ՎՐԱՅ

*Միացեալ Նահանգներու մէջ գտնուող UCLA համալսարանի հետազօտական խումբը իր կատարած վերջին փորձարկումի արդիւնքներուն վրայ հիմնուելով կը յայտնէ թէ փոքրերը յետագային կրնան կորսնցնել դէմ դիմաց հաղորդակցելու կարողութիւնը:*

*Ամերիկացի փորձագէտները իրենց ուսումնասիրութիւնը կատարած են մասնակցութեամբ Հարաւային Գալիֆորնիոյ պետական դպրոցի վեցերորդ դասարանի աշակերտներու, որոնցմէ մաս մը հինգ օրուան տեւողութեամբ ոչ մէկ կապ ունեցաւ բջիջային հեռաձայններու, համակարգիչի կամ հեռատեսիլի հետ: Իսկ մնացեալը՝ շարունակեցին իրենց սովորական կեանքը՝ ժամեր տրամադրելով արհեստագիտական կազմածներուն:*

*Աւելի քան հարիւր մասնակիցները փորձարկումի սկիզբը եւ աւարտին ենթարկուեցան յատուկ քննութեան, որուն միջոցով մասնագէտները կրցան եզրակացնել թէ մասնակիցը որքա՞ն կրնայ ճանչնալ այլ մարդոց դէմքի արտայայտութիւնները եւ անոնց յետին պահուած զգացումները:*

*Փորձարկումը աւարտելէ ետք, մասնագէտները կ'եզրակացնեն թէ արհեստագիտական կազմածներէ զուրկ փոքրիկ մասնակիցներու մօտ հինգ օրուան ընթացքին բարելաւուած են այլ մարդոց դէմքի արտայայտութիւնները եւ զգացումները ըմբռնելու կարողութիւնը:*

*Առողջ հաղորդակցութեան համար անհրաժեշտ է ըմբռնել մարդոց ոչ- խօսակցական շարժուձեւերը, որոնց մաս կը կազմեն դէմքի եւ մարմնի արտայայտութիւնները: Կազմածներու միջոցով հաղորդակցութեան ընթացքին փոքրերը հեռու կը մնան այս փորձառութենէն եւ ժամանակի ընթացքին կրնան կորսնցնել այլ մարդոց զգացումները հասկնալու կարողութիւնը:*

# ՀԻՆԳ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՐՈՆՔ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՆ ՈՒՐԱԽ ՄԱՐԴՈՑ ՄՕՏ

*Ուրախութեան ձեռք բերումը մեծ մասամբ կախեալ է անձէն:*

*Ինչպէս ամէն բան, ուրախութիւնը եւս կը պահանջէ լուրջ աշխատանք՝ թէ՛ զայն ձեռք բերելու եւ թէ՛ պահպանելու համար: Սան Ֆրանսիսքոյի Պետական Համալսարանի դասախօս եւ հետազօտող՝ Տոքթ. Րայան Հաուէլ իր ուսումնասիրութիւնները կատարած է ուրախութեան ծիրին մէջ: Ան բազմաթիւ ուսումնասիրութիւններ կատարած է յայտնաբերելու համար թէ նիւթական հարստութիւնը որքա՞ն եւ ի՞նչ ձեւերով կրնայ օգտակար հանդիսանալ մարդուն, որպէսզի ան ուրախ ըլլայ: Վերջերս, Հաուէլ եզրակացնելով իր տարիներու փորձառութիւնը եւ հիմնուելով իր հետազօտութիւններու արդիւնքներուն վրայ՝ կը փոխանցէ հինգ հիմնական սովորութիւններ, որոնք սովորական են ուրախ անձերու մօտ:*

*1. Ուրախ անձերը գուրգուրանքով կը մօտենան իրենց անցեալին: Մարդը միակ կենդանին է, որ կարողութիւնը ունի իր մտքով ճամբորդելու դէպի անցեալ եւ ապագայ: Մարդ արարածը կրնայ վերապրիլ անցեալը եւ մտքին մէջ ստեղծել իր ապագան: Սակայն ուրախ մարդը կը վերապրի միայն իր անցեալի երջանիկ պահերը եւ կը վերյիշէ դրական զգացումներ արթնցնող յիշատակները: Ուրախ մարդը կը շրջանցէ անցեալի ցաւերը:*

*2. Ուրախ մարդիկ կը վարակուին այլ մարդոց դրական զգացումներով: Զգայուն անձեր դիւրութեամբ կ'ըմբռնեն ուրիշներու զգացումները եւ անոնց հետ կը բաժնեն ցաւը եւ ուրախութիւնը: Ուրախ մարդիկ սովորաբար կը զգան այլ մարդոց դրական զգացումները եւ այդ մէկը կ'ուրախացնէ զիրենք:*

*3. Ուրախ մարդիկ կ'ունենան դրական միջավայր: Առողջ ներաշխարհի համար անհրաժեշտ է պատկանելիութեան զգացումը, որովհետեւ մարդ արարածը որքան ալ ինքնաբաւ ըլլայ, պէտքը կ'ունենայ իր շրջապատի գնահատանքին կամ քաջալերանքին: Ուրախ մարդիկ յաճախ կ'արտայայտուին իրենց պատկանելիութեան զգացումի մասին: Դրական միջավայրի պատկանելիութիւնը կ'օգնէ, որ մարդիկ պահպանեն իրենց ուրախութիւնը:*

*4.Ուրախ մարդիկ լաւ կը դասաւորեն իրենց եկամուտը: Ըստ հոգեբաններու՝ ուղղակի կապակցութիւն գոյութիւն ունի եկամուտի եւ ուրախութեան միջեւ, սակայն դրամը չէ որ մեզի ուրախութիւն կը պարգեւէ: Դրամի միջոցով ուրախութիւն ձեռք կրնանք ձգել միայն երբ անիկա ճիշդ ձեւով ծախսենք: Հաուէլի համաձայն՝ դրամը պէտք է ծառայէ նպատակի մը եւ մարդիկ պէտք է խուսափին պատահական ծախսերէ:*

*5.Ուրախ մարդիկ իրենց դրամը կը ծախսեն կեանքի փորձառութիւններու վրայ: Թանկարժէք իրերու գնումները, ինչպէս՝ smartphone-ի laptop-ի, հագուստեղէնի, ոսկեղէնի եւ այլ իրերու ձեռք ձգումը կրնայ վայրկեանական մեծ գոհունակութիւն պատճառել, սակայն այս գոհունակութիւնը երկար չի տեւեր: Երկարատեւ ուրախութեան համար թելադրելի է որ մարդիկ դրամ յատկացնեն կատարելու իրենց նախասիրած վարժութիւնները, ինչպէս՝ ski, ճամբորդութիւն, ուսում, եւայլն:*

# ՊՈՂՊԱՏԻ ՊԷՍ ՍԷՐ

*Շարունակուած էջ 16-էն*

*րոնք խօսեն Աստղիկի ծնողների հետ ձեր սիրոյ մասին:*

*-Ո՛չ, դեռ ժամանակը չէ, մենք երկուսս էլ փորձառական ժամանակ ենք անցկացնում, միասնական կեանքը պէտք է մտածուած ոչ թէ պատահական սիրոյ արդիւնք լինի, ինչպէս հրաբուխի պէս ժայթքի եւ ապա հանգչի: Մեր օրերին հաճոյքի նպատակով ամուսնանում են եւ անամօթաբար մէկ երկու տարի ապրելով բաժանւում են: Խոր ճանաչողութեամբ ամուսնութիւնը տեւական եւ երջանկաբեր է լինում:*

*-Ինչպէս որ դու ասես բալէս, կարեւորը քո եւ Աստղիկի որոշումն է:*

*-Մա՛մ, դուք առաւօտը մեկնէք, ես դեռ ժամանակ ունեմ հանրակացարանում մնալու, ամէն ինչ կը տեղեկացնեմ ձեզ:*

*Երբ պրն. Յակոբն ու տիկ. Սիրանուշը իմացան, որ մերոնք առաւօտեան պիտի մեկնեն, դէմ կանգնեցին, թէ՝*

*-Մի քանի օր էլ մնացէք, տանենք ձեզ քաղաքի տեսարժան վայրերը ցոյց տանք, ինչ է այսպէս շուտ էք մեկնում:*

*-Մի անհնգստացէք էլի կը գանք, այս անգամ երկար կը մնանք, հայրս էր:*

*Մի քանի օրից Աստղիկը աւարտեց վերջին քննութիւնը եւ սպասեց արդիւնքի:*

*Մեր հանդիպումներն առաւել եւս զարգացան, զրուցում էինք կեանքին առնչւող տարբեր խնդիրների եւ պարտականութիւնների մասին, տարրաձայնութիւնները փարատւում էին տրամաբանական խոր համոզումով, այդուհանդերձ երկուստեք սէրն էր որ խօսում էր մեր մէջ, սէրը գաթայի խորիզի պէս կեանքի համն ու հոտն է՝ շարժիչ ուժն ու գեղեցկութեան արարիչը: Ես ու Աստղիկը սիրով որոշեցինք միասնական կեանք սկսել նուիրուածութեամբ:*

*Աստղիկն եւս բարձր գնահատականներով արժանացաւ տարրալուծարանի մասնագիտական մագիստրոսական վկայականին:*

*Որոշեցինք ճոխ խնճոյքով նշել իր վաստակած յաջողութիւնները:*

*Աստղիկի ընտանեկան կազմի ուրախութիւնը անբացատրելի էր, անշուշտ ես էլ նրանց շարքում, ամէն ինչ դասաւորում էինք միասնաբար:*

*Խնճոյքի օրը եւ իմ ու Աստղիկի սիրային կնքուածութիւնը տեղեկացրեցի մօրս եւ առաջարկեցի մեր ազգային սովորութիւններին համապատասխան պատրաստութիւն տեսնել:*

*Պրն. Յակոբի եւ տիկ.Սիրանուշի ուրախութիւնը կրկնապատկուեց լուր ստանալով, որ մերոնք ներկայ են լինելու նաեւ խնամախօսութեան նպատակով:*

*Այսպիսով երկու երիտասարդ համազօր ուժերով կապուեցին իրար ապրելու իմաստալից կեանք, կազմելու ընտանիք կիրթ ու ուսեալ զաւակներ ընծայաբերելու իրենց ժողովրդին:*

## Խաբէութեան եւ ինքնախաբէութեան վարպետները

*Շարունակուածէջ 2–էն*

*Իհարկէ, չի բացառւում, որ իրականում այն քննարկուել է: Սակայն եթէ կողմերը նախընտրում են դրա մասին ոչինչ չտեղեկացնել, փոխարէնը չեշտադրում են զուտ մարտավարական նշանակութիւն ունեցող՝ իշխանութեանը ներկայացուած 12 կէտանոց պահանջագրի կատարման վիճակն ամփոփող առաջիկայ հանրահաւաքի կազմակերպչական խնդիրների վրայ, պէտք է ենթադրել, որ նրանք չեն կարողանում այդ հարցում գալ ընդհանուր յայտարարի: Արդիւնքում, ինչպէս միշտ, ներքին այդ հակասութիւնները, շահերի բախումը թաքցնելու հիմնական ձեւը դարձել է երկրորդական, տակտիկական որոշ հարցերի շուրջ փոխզիջումային որոշումներ կայացնելու հանգամանքը թմբկահարելը, ինչը պարզունակ քաղաքական աճպարարութիւն է:*

*Դրանցից էր, օրինակ, այդ 12 կէտանոց պահանջագրի ներկայացումը իշխանութիւններին, որի կատարման համար, ինչպէս յայտնի է, ժամանակ էր տրուել մինչեւ Սեպտեմբեր: Այդ ժամկէտն արդէն սպառուել է, եւ հիմա քառեակը պէտք է որոշի՝ ի՞նչ անել դրանց հետ կամ աւելի ճիշտ՝ ինչպէ՞ս դուրս գալ դրա տակից: Խնդիրն այն է, որ իշխանութիւնն այդ իսկապէս առարկայական եւ կարեւոր, բայց իրավիճակային պահանջներից մէկ-երկուսը կատարել է, մեծ մասը՝ ոչ: Հիմա քառեակը պէտք է որոշի՝ արդեօ՞ք չկատարուած մասն այնքան կարեւոր է, որ իշխանութիւններին «կարմիր քարտ» ցոյց տրուի: Առայժմ միակ բանը, որ կարողացել են անել քառեակը ներկայացնող ուժերը, Հոկտեմբերի կէսերին հանրահաւաքի անցկացումն է եւ այդ հարցի պատասխանը տալը: Բայց բոլորը հասկանում են, որ ամենակարեւորը ոչ թէ այդ պատասխանն է, այլ այն, թէ ի՞նչ է հետեւելու դրանից յետոյ, որո՞նք են լինելու ընդդիմութեան քայլերը, մինչեւ ո՞ւր է այն գնալու, եւ արդեօք դա հի՞մք է դարձուելու ամբողջական իշխանափոխութեան խնդիր դնելու եւ, օրինակ, նախագահի կամ գոնէ վարչապետի հրաժարականը պահանջելու համար: Ահա սրան է, որ քառեակն իրականում պատրաստ չէ եւ չի եղել երբեք:*

*ՀԱԿ-ը եւ «Ժառանգութիւնն» առաջ են քաշում ամբողջական իշխանափոխութեան եւ Սերժ Սարգսեանի հրաժարականը պահանջելու հարցը: ՀՅԴ- ու ԲՀԿ-ն, սակայն, նման արմատական մօտեցումը մերժում են՝ պաշտպանելով այսպէս կոչուած դանդաղ շտապելու տարբերակը: Նրանց բոլորի դիրքորոշումների վրայ ոչ թէ այս կամ որեւէ այլ պահանջը կամ դրանց կատարման վիճակն է ազդել, այլ դրուած մարտավարական բացարձակապէս տարբեր եւ ի սկզբանէ բոլորին հասկանալի միանգամայն տարբեր նպատակները:*

*Բանն այն է, որ ԲՀԿ-ն առաջնորդւում է առաւելագոյնը ներքին թաւշեայ յեղաշրջման տրամաբանութեամբ, ընդ որում՝ չկարողանալով շրջանցել Յովիկ Աբրահամեանի գործօնը: ԲՀԿ-ում հասկանում են, որ ծայրայեղ գործողութիւնների գնալը գործող իշխանութեան հետ կարող է խորտակել նաեւ իրեն՝ որպէս այդ իշխանութեան գենետիկան ամբողջութեամբ կրող հոգեզաւակ: Այդ պատճառով ԲՀԿ-ի գործողութիւնների հիմքում ընկած է գործող համակարգը Սերժ Սարգսեանից սահուն կերպով վերցնելու, նուազագոյնը՝ առաւել յարմար պայմաններով կիսելու մտադրութիւնը: Անգամ Ռոբերտ Քոչարեանի՝ իշխանութեան վերադառնալու կամ նրան վերադարձնելու խնդիրը ԲՀԿ-ն դիտարկում է հենց այս տեսանկիւնից: ՀԱԿ-ը եւ «Ժառանգութիւնն. իրենց հերթին հասկանում են, որ այն սցենարը, որով առաջնորդւում է ԲՀԿ-ն ու իր ետեւից քարշ է տալիս իրենց, չի հանգեցնելու որակական, համակարգային փոփոխութեան, այլ ընդամէնը բերելու է դերակատարների պարզ փոխատեղման, որից իրենց բաժին չի հանուելու: Աւելին, նրանք լուրջ մտավախութիւն ունեն, որ կարող են կամայ թէ ակամայ դառնալ Քոչարեանին վերադարձնելու նպատակին ծառայող գործիքներ:*

*Միաժամանակ այս 4 ուժերից իւրաքանչիւրն էլ հասկանում է, որ առանց իրար եւ քառեակից դուրս դատապարտուած են մարգինալացման՝ իրենց համար շատ աւելի դրամատիկ հետեւանքներով: Հենց այս գործօնով պայմանաւորուած՝ ոչ իշխանական ուժերի համար առաջնայինը դառնում է ոչ թէ իշխանափոխութեան խնդիրը կամ իշխանութեան վերարտադրման կանխարգելումը, այլ, այսպէս ասած, առայժմ ջրի երեսին մնալը, չսուզուելը, քաղաքական դաշտում իրենց ներկայութիւնն ինչ-որ բանով արդարացնելը: Դրա միակ շանսը տալիս է երկրորդային նշանակութեան հարցերի շուրջ փոխզիջումային համաձայնութիւնների հասնելու, շարունակ հանդիպումներ անցկացնելու միջոցով միասնականութեան տպաւորութիւն ստեղծելը եւ դա քաղաքական գործօն դարձնելը:*

*Սա, իհարկէ, չի բացառւում, որ իշխանութեան եւ մասնաւորապէս Սերժ Սարգսեանի դիրքերի թուլացման նախանշանների ի յայտ գալու պարագայում միասնականութեան այդ իմիտացիան կարող է փոխակերպուել իրականի: Բայց որքան էլ ներկայումս ընդդիմութեան դաշտի այս իմիտացիոն դրսեւորումները վանող են, այնուամենայնիւ, պէտք է հաշուի առնել, որ սա այն է, ինչին ընդունակ է ներկայիս ընդդիմութիւնը: Այս դաշտում խաղացողների՝ իրականութիւնն ամէն կերպ կոծկելու ձգտումը նրանց ստիպում է երբեք չթուլացնել ակտիւութիւնը, շարունակ հանդէս գալ նոր կրեատիւ կամ շաբլոնային նախաձեռնութիւններով, ինչը կենդանութիւն է հաղորդում քաղաքականութեանը եւ ամենակարեւորը՝ իշխանութեանը որոշ հարցերում փոխզիջումների դրդելու միակ միջոց հանդիսանում:*

*«ՀԵՏՔ»*

HayastanInfo.net

## ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ ԻԴԵԱԼՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

*Շարունակուածէջ 7–էն*

*Հայի սիրտը ցաւեցնող եւ հոգին տանջող թերացումներ:*

*Յոյսեր ենք փայփայում մեր սրտերում չմոռանալով քննադատումն ու զգուշացումը յանուն մեր ժողովրդի բարօր եւ պայծառ ապագայի, մեր ժողովրդի ձգտումների եւ նպատակների իրականացման ճամբին տեսնել Հայաստանի կառավարութեան յառաջխաղացումները՝ դէպի ցեղասպանութեան եւ մեր արդար իրաւունքների ճանաչման եւ ձեռքբերման ի խնդիր, ի մասնաւորի Արցախ աշխարհի ազատութիւնն ու ազատագրուած տարածքների որեւէ մի գիրջում, Հայաստան եւ Արցախ միասնականօրէն լրացնում են ճախրող արծուի զոյգ թեւերը:*

*Դարերի բովում զուրկ հայկական պետականութիւնից մեր ժողովուրդը ապրել է տառապալից կեանք ենթարկուելով հալածանքների, կեղեքումների, կոտորածների, ջարդերի եւ հազար ու մի տեսակ նեղութեանց եւ չարչարանաց: Վերջապէս ծագել է լոյսը, վառուել է դարերով մարած ճրագը, որով մեր ժողովուրդը ցանկանում է խաղաղ եւ արժանապատիւ կեանք: Եկէք միասնաբար պաշտպանենք մեր անկախութիւնը, պետականութիւնը, քանի որ այս ծիրի եւ պարոյրի մէջ ենք ծլելու եւ ծաղկելու որպէս ազգ, ժողովուրդ, Հայաստան երկրի քաղաքացիներ՝ զարգանալու, բարգաւաճելու եւ մեր իրաւունքների տէրը դառնալու:*

*Անկախութիւնը նկատենք գերագոյն պարգեւ մեր մարտնչող հերոսների եւ չթողնենք նրա վրայ գէթ մի պուտ ստուեր իջնի:*

## «ՄԵԿ ՓԱՄՓՈՒՇՏ ՈՒՆԻՍ ՄԻԱՅՆ...»

*Շարունակուածէջ 14–էն*

*Ու դարձեալ Աւոն է: Ան ալ ամուր կեցած է իր դիրքին ու խարիսխին վրայ եւ ստանձնած է հրամանատարի պարտաւորութիւնը: Հեռադիտակով կը դիտէ ու կը հետեւի Աւոն, բայց այն համոզումով, որ պիտի տեսնէ «հայուն վերապրումը»:*

*«Մէկ փամփուշտ ունիս միայն...»:*

*Յստակ է եւ պատմութեան տուեալներէն մեկնելով՝ բացայայտ է, թէ հայուն ապրիլը եղած է «ցաւով»: Եւ երեւի տակաւին կը շարունակուի այդպէս ըլլալ: Եւ այդ «ցաւոտ» կեանքին մէջ հայը ունեցած եւ ապրած է «փորձութիւնը»...: Բայց նաեւ «իրական» է, թէ հայը այդ «ցաւին» մէջէն ու «փորձութեան» փորձառութենէն միշտ կառչած է «արժանապատիւ» կեանքին:*

*Ջիւանն է դարձեալ եւ իր ժապաւէնին մէջէն...*

*Ղարաբաղցի քաջամարտիկը դուրս եկաւ իր խարիսխ-դիրքէն՝ «խելագարած», կը կրակէ թշնամիին դիրքին վրայ ու կը յառաջանայ բացագանչելով. «Մենք մեր արժանապատուութեամբ է, որ պիտի ապրինք...»:*

*Հայը «մէկ փամփուշտ ունի միայն»: Եւ այդ փամփուշտը պիտի գործածէ, որպէսզի ապրի իր «արժանապատուութեամբ»-ը: Եւ «արժանապատուութիւնը» իր ազգային ինքնութեան եւ իր արդար պահանջատիրութեան մէջն ու անոր միջոցով է:*

*Եւ հայը իր «մէկ փամփուշտը» պիտի գործածէ, որպէսզի շարունակէ ապրիլ իր «արժանապատուութեամբ»:*

**SAVE THE DATE**

AMAA-Haigazian University Celebratory Banquet in honor of Dr. Mihran Agbabian and George R. Phillips, Esq.; Saturday, November 15, 2014, 6 pm, Beverly Hills Hotel, $200; Information: Julie Aharonian 818-368-5266; Katia Kermoyan 818-242-5064.

**SAVE THE DATE**

DECEMBER 6 - Saturday: Western Diocese Eleventh Annual Christmas Ball; 7:00 p.m. Reception and Gala Tree Lighting Ceremony, 8:00 p.m. Dinner-Dance and Program honoring Ten Young Professiional Community Activists, Nazareth and Sima Kalaydjian Hall, 3325 North Glenoaks Blvd., Burbank. For further info call the Western Diocese (818) 558-7474.

**Գրաւուած օր**
**Նոյեմբեր 15, 2014**
**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ**
**60 Ամեակի Շքեղ հանդիսութիւն**

**Office Space for Lease**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

## ԱԶՆԱՒՈ՛ՒՐ՝ STOP

*Շարունակուած էջ 13-էն*

*դիւանագիտական կամ ռազմական հռետորաբանութեամբ: Անուանի արուեստագէտ ըլլալ, չի նշանակեր նաեւ անուանի քաղաքագէտ ըլլալ:*

*Յիշեցնենք, որ առաջին անգամը չէ որ հանրածանօթ երգիչը կը գայթի քաղաքականութեան ոստայնին մէջ: Եւ ի հարկէ, նոյնքան ձախող եւ անհարկի կարծիքներով: 2011-ի աւարտին, երբ հայ-թրքական յարաբերութիւնները թեւակոխած էին զգայուն փուլ, հայաշխարհը երկփեղկուած էր թեր ու դէմ կարծիքներով, զգալիօրէն ճեղք մը յառաջացած էր հայրենի պետական քաղաքականութեան եւ Թուրքիոյ մերձեցման ընդդիմացողներուն միջեւ, սիրուած երգիչը երկու հարցազրոյցներով խռովեց հայ կեանքը. վշտահար ու յուսախաբ դարձուց իր համակիրներն ու հայատրոփ սիրտերը. իր բերնէն սպրդած մի քանի կարծիքները պաղ ցնցուղ մը պատճառեցին բոլորիս. ահա անոնցմէ՝ «ցեղասպանութիւն բառը թուրքերուն կը խանգարէ, ճիշդն ըսած ինծի ալ կը խանգարէ. եկէք ուրիշ բառ մը գտնանք», աւելի եւս՝ «միայն թէ սահմանները բացուին եւ թրքական կառավարութիւնը մտածէ մեզի հետ երկխօսութիւն սկսելու մասին», «սեպենք թէ թուրքերը վերադարձուցին հայկական հողերը, ո՞վ պիտի երթայ բնակելու հոն», «ի՞նչ սպասել օտարներէն, անոնք առաւելագոյնը պիտի ճանչնան ցեղասպանութիւնը, յետո՞յ»:*

*Արդարեւ, տասնամեակներու հայկական պայքարը ցեղասպանութիւն եզրին շուրջ, զայն միջազգայնօրէն ճանչցնելու ուղղութեամբ եւ հայկական հողերու հատուցման առնչութեամբ, այդ օրերուն 87-ամեայ Շարլ Ազնաւուրի միջոցաւ յօդս ցնդեցաւ: Թրքական կողմին համար՝ ինչ համեղ խայծ: Ուստի՝ ան խորտակեց շատերուն սիրտերը՝ թէեւ ներողամտութեան ոգին եւ թիւրիմացութիւնը չրջանցելու տրամադրութիւնները եղան հասկնալիօրէն տիրական:*

*Բայց կայ հարցին մտահոգիչ երեսակը: Միջին Արեւելքի եւ հայկական պահանջատիրութեան շուրջ վերոյիշեալ խնդրայարոյց խօսքերը եթէ պատկանէին սոսկ արուեստագէտի մը, վերագրէինք պատահական երգիչի մը, կամ նկատէինք ջղապիրկ եւ պոռթկունակ պահի մը ազդեցութեան հետեւանք, հարցը հեշտութեամբ կը կծկուէր: Սակայն, անոնք Հայաստանի Հանրապետութեան դեսպանի մը կարծիքներն են. այսինքն՝ դիւանագիտական բարձրագոյն պաշտօնի մը տիրոջ խօսքերը: Շարլ Ազնաւուր Հայաստանի Հանրապետութեան դեսպանն է Զուիցերիոյ եւ ԵՈՒՆԵՍՔՕ-ի մօտ: Պատասխանատու զոյգ պաշտօններ, որոնց ստանձնողը հաշուետու է պետութեան, հանրութեան եւ պատմութեան:*

*Մեր նիւթէն տեղին շեղում մը.- Հայաստանի նախագահը կամ արտաքին դիւանագիտութեան պետը ի՞նչ հիմունքներով մեծահասակ արուեստագէտ մը կը կարգեն դիւանագիտական ներկայացուցիչ մը: Սա մասնագիտական կոպիտ սայթաքում մը չէ՞: Դիւանագէտներու տագնա՞պ կայ միթէ: Քաղաքականութեան նուրբ մասնագիտութիւնը յարմա՞ր է յանձնել Շարլ Ազնաւուրի նման անհատի, այն ալ Զուիցերիոյ նման երկրի մը մօտ: Հայրենասիրութիւնը կապ չունի այստեղ. խնդիրը լուրջ ու պատասխանատու մասնագիտութեան կը վերաբերի: Նոյնն է պարագան Եուրի Վարդանեանի: Աշխարհահռչակ ծանրամարտիկ մը ինչպէ՞ս կը դառնայ Վրաստանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան: Անգուգական լեկենտար է Եուրի Վարդանեան, մի գուցէ յարմարագոյն նախարարն էր սպորտի եւ երիտասարդութեան, սակայն միթէ՞ դիւանագիտական ասպարէզ պէտք է նետուէր ան՝ այն ալ Թիֆլիսի նման մայրաքաղաքի մը մէջ, որուն հետ կը պահանջուի մշակել նրբանուրբ եւ զգոյշ քաղաքականութիւն: Շարլ Ազնաւուրի եւ Եուրի Վարդանեանի փոխարէն ճկուն եւ հմուտ դիւանագէտ ներ պէտք չէ՞ր տեսնէինք Զուիցերիոյ եւ Վրաստանի մէջ:*

*Ո՞վ կրնայ ըմբռնել այս առեղծուածը:*

*Յամենայնդէպս, Շարլ Ազնաւուրի հերթաբար եւ մերթաբար անճահ դրսեւորումները ո՛չ տարեց մարդու, ո՛չ դիւանագէտի եւ ո՛չ ալ արուեստագէտի յարիր են:*

*Ձայնդ անսպա՛ռ, կեանքդ երկա՛ր, վարձքդ կատա՛ր հայրե - նասէր երգիչ ու բեմի գործիչ. բայց՝ քաղաքական բեմահարթակի վրայ որեւէ արտայայտութենէդ առաջ յետայսու պիտի շտապենք ըսելու՝ Ազնաւո՛ւր՝ stop...:*

---

## ՄԵՐՏԻՆԵԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

*Շարունակուած էջ 15-էն*

*պաշտօնապէս ներկայացուց նոր նշանակուած Նախամանկապարտէզի պատասխանատուն՝ Տիկ. Մարիժան Գէորգեանը՝ «որուն երկար տարիներու փորձառութիւնն ու հմտութիւնը մեծապէս պիտի նպաստեն այս հաստատութեան յաջող ընթացքին» ըսաւ Տիկ. Արսլանեան:*

*Իր կարգին, Տիկ. Գէորգեան խօսք առնելով, ողջունեց ներկաները, իր երախտագիտութիւնը յայտնեց Աստուծոյ՝ իրեն վստահուած այս պաշտօնին համար, որ նոր առիթ մը պիտի ընծայէ իրեն՝ ուղղելու հայ մանուկին առաջին քայլերը: Ապա ան ներկայացուց Նախամանկապարտէզի անձնակազմը:*

*Հանդիսութեան աւարտին, ծնողներ, իրենց զաւակներուն հետ այցելեցին Նախամանկապարտէզի դասարանները, ծանօթանալու աշակերտներու առօրեայ միջավայրին եւ օրէնքներուն: Վարժարանի այս բաժնին համար , դպրոցական առաջին երեք օրերը որոշուած էր կէս օր ընել:*

*«Ամէն գործի յաջողութեան կէսը զայն սկսելուն մէջ կը կայանայ», կ՚ըսէ ժողովրդային ասացուածքը. Մերտինեան Վարժարանը նոր տարի մը սկսաւ՝ զայն յաջողութեամբ աւարտելու տեսլականով:*




## «ԸՆԴԱՄԷՆԸ ԹՈՒՂԹԻ ԿՏՈՐ ՄԸ»

*Շարունակուած էջ 13-էն*

*դատեց տեղւոյն հայ համայնքը, Քալիֆորնիոյ նահանգը եւ բանաձեւը: Վերջինը խափանելու իր ձախողութիւը արդարացնելու համար ան պնդեց, թէ Քալիֆորնիոյ ծերակուտականները «իրենց ընտրական քարոզարշաւներուն համար հսկայական նիւթական նուիրատուութիւններ» ստացած են «հայկական լոպիէն»: Մոռնալով, որ ան կը ներկայացնէ աշխարհի ամենաբռնապետական վարչակարգերէն մէկը, Ատրպէյճանի գլխաւոր հիւպատոսը յանդգնած է դաս տալ Միացեալ Նահանգներու պաշտօնեաներուն՝ «Ամերիկայի քաղաքական համակարգին մէջ առկայ լուրջ թերութեան համար, որ կարիք ունի իսկոյն շտկուելու»:*

*Ատրպէյճանի գլխաւոր հիւպատոսը, նախքան նման անհիմն մեղադրանքներ ընելը, պէտք է համացանցի վրայ փնտռէր, որպէսզի տեսնէր, թէ Արցախի բանաձեւին համար քուէարկած 24 ծերակուտականները որքան գումար ստացած են ամերիկահայերէն, եթէ այդպիսիք եղած են: Միացեալ Նահանգներու մէջ քարոզարշաւներու նուիրատուութիւնները թափանցիկ են, ի տարբերութիւն Ատրպէյճանի, ուր այցելած քաղաքական գործիչներուն ճոխ ընդունելութեան կ՚արժանացնեն եւ կը ճանապարհեն դրամի տրցակներով, ձկնկիթի տուփերով եւ ոսկիի ձուլակտորներով...*

*Գլխաւոր հիւպատոսը բանաձեւի ընդունումը նաեւ վերագրած է «հայկական լոպիին չափազանց մեծ ջանքերուն Քալիֆորնիոյ մէջ, ուր շուրջ մէկ միլիոն հայ կը բնակի»: Մէկ միլիոնը այլ չափազանցութիւն մըն է ատրպէյճանցի դիւանագէտին կողմէ, որ շարունակելով իր ընթացքը՝ կեղծ մեղադրանք կը ներկայացնէ հայկական «ցեղական լոպիին», որ, իբր թէ դիմած է «սպառնալիքներու, շանթաժի եւ այլ միջոցներու» Քալիֆորնիոյ ծերակուտականներու դէմ:*

*Այնուհետեւ Ատրպէյճանի գլխաւոր հիւպատոսը կը պարծենայ իր գործադրած ջանքերով ընդդէմ բանաձեւին՝ պնդելով, որ ան եւ իր հիւպատոսութիւնը շարք մը «լուրջ քայլերու» ձեռնարկած են, ներառեալ «բողոքի նամակներու յղում բոլոր ծերակուտականներուն (եւ) բազմաթիւ հանդիպումներ անոնց հետ...»: Հակառակ անոր խելայեղ գործունէութեան, ոչ մէկ ծերակուտական դէմ քուէարկեց Արցախի օրինագիծին- Անըբեւակայելի է, սակայն հիւպատոսը կը պնդէ, որ ան մեծ յաղթանակ տարած է, որովհետեւ վերջնական քուէրակութիւնը ի նպաստ Արցախին եղած է 24-0, եւ ոչ թէ 40-0, քանի որ որոշ ծերակուտականներ կա՛մ բացակայած են, կա՛մ ձեռնպահ մնացած...*

*Հասկնալիօրէն, գլխաւոր հիւպատոսը մոռցած է նշելու Արցախի օրինագիծին դէմ պայքարի իր մեծագոյն կողմնակիցները՝ հզօր լոպիական ընկերութիւնները, զորս Ատրպէյճան վարձած է Ուաշինկթընի եւ Լոս Անճելըսի մէջ՝ հսկայական գումարներով: Այդ ընկերութիւններէն մէկը՝ JCI World-wide-ը, Սէթ Ճէքըպսընի գլխաւորութեամբ, նամակ յղած էր Քալիֆորնիոյ 40 ծերակուտականներուն՝ Ռապպի Տով Նիւմըրի, Պեւերլիուտի Խապատի, Ռապպի Մենտի Քոհէնի, Սագրամենթոյի Խապատի, Ռապպի Եոնահ Պուգչթէյնի եւ Փիքօ Շուլի ստորագրութեամբ: Երեք ռապպիները ծերակուտականներուն գրած էին, որ անոնք «կտրականապէս դէմ են թիւ 32 բանաձեւին.... Ատրպէյճանը կարեւոր դաշնակից է Իսրայէլի եւ հրեայ ժողովուրդին համար: Հրեաները հազարաւոր տարիներ ազատ եւ պաշտպանուած կ՚ապրին Ատրպէյճանի մէջ. Իբրեւ Քալիֆորնիոյ հրէական համայնքի ռապպիներ եւ առաջնորդներ, մենք կը զօրակցինք մեր եղբայրներուն ու քոյրերուն Ատրպէյճանի մէջ եւ կը պահանջենք ԴԷՄ քուէարկել բանաձեւին»: Այս ռապպիները ակնյայտօրէն անյարմար վիճակի մէջ դրին իրենք զիրենք՝ նման անհեթեթ նամակ ուղարկելով, քանի որ չկրցան նոյնիսկ մէկ ծերակուտական համոզել դէմ քուէարկելու Արցախի բանաձեւին: Աւելին, շրջանառութեան մէջ դրուած իրենց նամակը Ատրպէյճանի քրիւղի տոլարներու անիմաստ վատնում էր, քանզի JCI-ի մեծածախս լոպիինկը անարժէք էր:*

*Հետաքրքրական է, արդեօք Նախագահ Ալիեւ գիտէ՞, որ Լոս Անճելըսի մէջ Ատրպէյճանի հիւպատոսութիւնը եւ Ուաշինկթընի մէջ դեսպանատունը միլիոնաւոր տոլարներ կը վատնեն անարդիւնաւէտ լոպիական ընկերութիւններուն վրայ: Արդեօք Ատրպէյճանի քաղաքացիները, որոնք կ՚ապրին ծայրայեղ աղքատութեան մէջ, տեղեա՞կ են, որ իրենց ղեկավարները յօդս կը ցնդեցնեն երկրի հարստութիւնը արտասահմանի մէջ քաղաքական գործունէութեան վրայ՝ ընդամէնը «թուղթի կտորի մը» հակազդելու համար: Իսկապէս, եթէ Քալիֆորնիոյ Ծերակոյտի բանաձեւը անիմաստ «թուղթի կտոր մըն» էր, ինչպէս կը պնդէ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեան, ուրեմն ինչո՞ւ Ատրպէյճանը այդքան ժամանակ, ջանք ու գումար կը ծախսէ՝ փորձելով խափանել անոր ընդունումը:*

*Թարգմանեց՝*
***ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ***




ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՄԷՆ ԲԱՆԷ ՎԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ
ARMENIAN INDEPENDENCE DAY
FESTIVAL
Փառատօն
Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
SUNDAY SEPTEMBER
21, 2014
VERDUGO PARK
GLENDALE
1621 Canada Blvd., Glendale, CA, 91206
Starting at 11:00 am
LIVE MUSIC
DANCING
ART WORK EXIBITION
KIDS GAMES
ARMENIAN FOOD
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ
ԵՒ ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938